

## ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԲԱՐՉՐԱՅՎԱԾ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ-ամիզ Մեհթիևի «Գորիս-2010. արսուրդի թատրոնի տարեշրջանը» գիտաքաղաքական անպարարությունը\*

*2010թ. հոկտեմբերի 16-ին Գորիսում Սփյուռքի հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև նախագահ Սերժ Սարգսյանի ելույթից հետո Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար, սկադեմիկոս Ռ-ամիզ Մեհթիևի անունից այդ երկրի էլեկտրոնային լրատվամիջոցներում (Trend.az, Day.az և այլն) հոկտեմբերի 29-ին տեղադրվեց և ապա առանձին գրքույկի վերածվեց «Գորիս-2010. արսուրդի թատրոնի տարեշրջանը՝» վերնագիրը կրող մի ծավալուն «տեղեկանք», որը փաստորեն ՀՀ նախագահի առաջադրած պատմագիտական փաստարկների «պաշտոնական պատասխանն» է: Այն սկսվում է քաղաքական մեղադրանքներով և ավարտվում բավականին ընդարձակ պատմագիտական շարադրանքով, ինչն անկասկած, Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության շուրջ ադրբեջանական նախորդ կեղծարարությունների խորացված տարբերակն է:*

### 1. Հիշողության կորստի ախտանշաններ

Հատկանշական է, որ թեև մինչև վերջերս Հայաստանի Հանրապետության հաջորդական ղեկավարները խուսափել են պատմագիտական հարցերի շուրջ պաշտոնական Բաբվի հարցադրումներին պատասխանելու գալթակոությունից, իսկ հայր և որդի Ալիևներն իրենց հրապարակային ելույթներում բազմիցս հրահանգներ են իջեցրել սեփական երկրի պատմաբաններին՝ ստեղծելու աշխատություններ, «սպացուցելու համար», որ Ադրբեջանի տարածք են եղել ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև ներկայիս Հայաստանի Հանրապետության հողերը, այդ ամենին մասնակից, մասնագիտությամբ փիլիսոփա, Ռ-ամիզ Մեհթիևը<sup>2</sup> իր «Գորիս-2010. արսուրդի թատրոնի տարեշրջանը» հրապարակման

\* Գողվածն ընդունվել է տպագրության 12.12.2010:

1 Տե՛ս Рамиз Мехтиев, Горис – 2010: сезон театра абсурда, <http://www.Trend.az>, 29.10.2010.

2 Թեև սույն հրապարակման վերևում դրված է Ռ-ամիզ Մեհթիևի ստորագրությունը, սակայն, ամենայն հավանականությամբ, այն ստեղծվել է մի ինչ-որ խմբի կողմից և Internet է ներմուծվել վերջինիս

հենց առաջին իսկ նախադասություններից իրականությունը շրջել է գլխիվայր:

Նա պնդում է, թե իբր՝ «Սփյուռքից հրավիրելով լրագրողների, Մերձ Սարգսյանը հնարավորությունից օգտվելու և տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության կոչ անելու փոխարեն, յուրահատուկ «նախագահական» հրաման է տվել. «անձանաչելիորեն խեղաթյուրել պատմական փաստերը, իր կողմից հրապարակված եղանակով վերախմբագրել պատմությունը, անտեսել գիտական սկզբնաղբյուրները, նրանց փոխարեն հենվել իր կողմից առաջարկված առասպելների և հորինվածքների վրա: Առողջ ակադեմիական միջավայրում պետության ղեկավարը սովորաբար չի միջամտում գիտահետազոտական գործընթացին, այլ գիտնականների համար պայմաններ է ստեղծում հրատապ նշանակություն ունեցող հիմնահարցերի ուսումնասիրության, մասնագիտական, համակողմանի, անկողմնակալ և որ ամենևին էլ երկրորդական չէ՝ առկա սկզբնաղբյուրների ողջ հանրագումարի քննադատական վերլուծության, նրանց արդյունքների հետագա հրապարակման և լայն քննարկման համար՝ առանց նրանց ընդհանուր զանգվածից մի մասն առանձնացնելու և մյուսներն անտեսելու<sup>3</sup>»:

Հարց է առաջանում՝ իրականում ո՞ւմ է ուղղված այս ծավալուն «ակադեմիական քարոզը», երբ, ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի ղեկավարը գործիսյան իր ելույթում **առաջին անգամ է** հրապարակավ անդրադարձել պատմագիտական հարցերին: Ուստի՝ երբ ակադեմիկոսի կոչում ունեցող անձը պնդում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահը հրաման է տվել «վերախմբագրել պատմությունը», մոռանում է, որ գիտնականի անաչառության առաջին պայմանը նման «հրամանի» տեքստի հրապարակումն է, ինչը ստիպված ենք անել մենք՝ իր փոխարեն: Ահա այդ «հոկտեմբերի 16-ի հրամանը»՝ ուղղված Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչներին. «Ո՛չ գունազարդել, ո՛չ սևացնել, պարզապես ակտիվ ներկայացնել ճշմարտությունը. սա է խնդիրը, որը մենք միասին պետք է լուծենք<sup>4</sup>»:

Ավելին՝ երբ երկար տարիներ Ադրբեջանի նախագահի աշխատակազմը ղեկավարած անձնավորությունը հիշողության կորստի ակնհայտ ախտանշաններ է դրսևորում, ստիպված ենք կրկնել, որ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության նախագահի, նրա հաջորդական երկու ղեկավարները՝ հայր և որդի Ալիևները, արդեն շուրջ մեկ տասնամյակ հրապարակավ հանդես են գալիս ոչ թե տարածաշրջանի պատմությունը անաչառ կերպով ուսումնասիրելու, այլ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքների՝ «Ադրբեջանի հողեր» լինելն «ապացուցող» աշխատություններ գրելու (Հեյդար Ալիև, 1999 թ.), Լեռնային Ղարաբաղը «հնագույն ադրբեջանական տարածքներ» հռչակելու մասին (Իլիամ Ալիև, Բարդա, 13 սեպտեմբերի, 2004 թ.)՝ իրենց երկրի պատմաբաններին ուղղվող հրապարակային կոչերով:

Ուրեմն՝ մեր երկու պետություններից որի՞՞ հաջորդական ղեկավարներն են

ստորագրությամբ: Չլինելով պատմաբան, չտիրապետելով հայերենին, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը դժվար թե կարողանար 13 օրվա ընթացքում ուսումնասիրել այն հայկական աղբյուրներն ու գրականությունը, որոնք առկա են «Գորիս-2010. արևուրդի թատրոնի տարեշրջանը» աշխատության մեջ: Բայց քանի որ աշխատությունը լույս է տեսել ակադեմիկոս Ռ. Մեթիկի անունից, մեր պատասխանը նույնպես հասցեագրել ենք նրան:

3 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c 2.

4 Տե՛ս <http://www.Lragir.am> 18.10.2010.

տարիներ շարունակ «միջամտել գիտահետազոտական գործընթացին» և ուղղակի ցուցմունքներ տվել սեփական երկրի պատմաբաններին: Եթե Հայաստանի Հանրապետություն, ապա Ռ. Մեհթիևը պետք է, որ մատնանշի 2010 թ. հոկտեմբերի 16-ին նախորդած նման մեկ օրինակ, իսկ եթե Ադրբեջանի, ապա մեր պատասխանը կարդալուց հետո նա պարտավոր է կամ **հեռքել**, կամ էլ **վերհիշել** իր երկու անմիջական ղեկավարների վերը նշված և բազմաթիվ այլ «պատմագիտական հրամանագրերն» ու դրանց ուղեկցած զավեշտական վերլուծությունները:

Մեր կողմից հույս ենք հայտնում, որ սեփական ղեկավարների խոսքերը **հեռքելու** պարագայում Ռ. Մեհթիևին չեն ազատի աշխատանքից, իսկ **վերհիշելու** պարագայում, որն ավելի հավանական է՝ նկատի ունենալով Ադրբեջանի հաջորդական նախագահների ելույթների հրապարակային բնույթը, կվերականգնվի նաև Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարի **հիշողությունը**:

Հիշողության կորուստը հաղթահարելու պարագայում Ռ. Մեհթիևը թերևս կիրաժարվի նաև Հայաստանի նախագահի լեգիտիմությունը կասկածի տակ դնելու գայթակղությունից, որովհետև, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանում նախագահական իշխանությունը փոխանցվում է հորից որդուն, ուստի Ռ. Մեհթիևը՝ իբրև ժառանգական **միապետի** աշխատակազմի ղեկավար, կարծում ենք, բարոյական իրավունք չունի արտասանելու «լեգիտիմություն» հասկացությունը:

Սեփական հիշողությունը վերականգնելու և հայկական կողմին Խոջալուի դեպքերի վերաբերյալ անհեթեթ մեղադրանքներ չներկայացնելու համար Ռ. Մեհթիևին առաջարկում ենք գոնե մեկ անգամ կարդալ 2003-ին ռուսերենով լույս տեսած Հայկ Գեմոյանի աշխատությունը<sup>5</sup>:

Ռ. Մեհթիևի հիշողության կորստի փաստն ակնհայտ է դառնում նաև Հայաստանի Հանրապետության նախագահին վերագրվող՝ միջազգային իրավունքի մեջ ազգերի ինքնորոշման հիմնախնդրի «կամայական մեկնաբանության» մասին մեղադրանքի հետ ծանոթանալիս: Հարց է առաջանում՝ եթե միջնորդ երկրները պնդում են, որ Ղարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականության և ուժի չկիրառման սկզբունքների համադրումով և Աստանայում՝ ԵԱՀԿ վերջին գագաթաժողովում, ԱՄՆ պետքարտուղարի բերանով նախագուշացնում են, որ չի կարելի դրանցից առանձնացնել որևէ մեկը, իսկ Մադրիդյան սկզբունքները նախատեսում են Ղարաբաղի ազգաբնակչության իրավաբանորեն պարտավորեցնող ազատ կամարտահայտման իրավունքը, ապա ո՞րն է այստեղ ազգերի ինքնորոշման իրավունքի «կամայական մեկնաբանությունը»: Որպես գիտնական, կարծում են, որ «կամայական մեկնաբանությունը» միջազգային հանրության կողմից ճանաչվող՝ ԼՂՀ ժողովրդի ազատ կամարտահայտման իրավունքի անտեսումն է Ադրբեջանի կողմից:

Հայտնի է, որ ամեն մի դարաշրջանում հզոր տերությունները միջազգային իրավունքի շղարշի տակ փորձում են հավերժացնել ստեղծված քաղաքական վիճակը, սակայն ինքնորոշման իրավունքը, գոնե վերջին դարերից, դարձել է հասարակական կյանքի անկապտելի մասը: Եթե չլիներ այդ, ապա Բանգլադեշի ստեղծումը և անջատումը Պակիստանից պետք է համարվեր միջազգային

5 Տե՛ս Айк Демоян, Ходжалинское дело. особая папка, Ереван, 2003.

իրավունքին հակասող երևույթ: Բայց դա բոլորովին էլ այդպես չէ: Ավելին՝ պետք է հակաիրավական ակտ դիտվեր նաև ԽՍՀՄ-ի կամ Հարավսլավիայի փլուզումը, Կոսովոյի անկախացումը: Բայց ո՛չ, միջազգային հանրությունը հանգիստ ընդունել է այդ փոփոխությունները և վավերացրել դրանք: Եվ այդ ամենի փոխարեն՝ Հելսինկիի եզրափակիչ ակտի պաշտպանությանն ապավինող հեղինակն ինչու՞ չի ընդունում Ադրբեջանի անկախության անիրավական լինելը: Չէ՞ որ 1975 թվին Ադրբեջանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր, և Հելսինկիի ակտը ճանաչել է ԽՍՀՄ-ի սահմանները:

ՀՀ նախագահը Սփյուռքի հայ լրագրողներին կոչ արեց ներկայացնել ճշմարիտ և օբյեկտիվ պատմությունն Արցախի վերաբերյալ և այն հասցնել համաշխարհային հանրությանը: Այո՛, պետք չէ ոչինչ գունազարդել և դա, իհարկե, միանգամայն ճիշտ խորհուրդ է: Այն վերաբերում է ոչ միայն հայ հեղինակներին, այլև օտարազգի ակադեմիկոսներին, որովհետև գիտնականները երևույթները քննում են նրանց պատճառահետևանքային կապի մեջ: Ուստի, երբ Ռ. Մեխիևը սկսում է խոսել ավերված և հրկիզված Շուշիի մասին, որին այդ վիճակի մեջ են դրել «հայ մարդասպանները», մոռանում է, որ մինչխորհրդային շրջանում Շուշին հանդիսանում էր Անդրկովկասի չորրորդ քաղաքը՝ հայկական գերակշիռ բնակչությամբ: Իսկ ովքե՞ր կոտորեցին Շուշիի հայ բնակչության մեծ մասին և հրկիզեցին հայկական թաղամասերը 1920 թ. մարտին, հայե՞րը, թե՞ ադրբեջանցիները: Մինչդեռ, 1992 թ. մայիսին, երբ հայերն ազատագրեցին Շուշին, այնտեղ խաղաղ ադրբեջանական բնակչություն չկար: Ուրեմն՝ ովքե՞ր են մարդասպանները՝ դժվար չէ եզրակացնել:

Ավելին, հայտնի է նաև, որ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղին տրվելու էր լայն ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով: Հարց է առաջանում՝ իսկ ինչու՞ դա չիրագործվեց: Պատասխանը պարզ է. ադրբեջանական իշխանությունները հասկանում էին, որ Շուշին նորից Ղարաբաղի կենտրոն դառնալու դեպքում արագ կվերականգներ իր հայկականությունը, ուստի այն թույլ չտալու հեռահար նպատակով մարզի կենտրոն հռչակվեց Ստեփանակերտը: Կամ, երբ սկսվեցին արցախյան իրադարձությունները, ինչպե՞ս վարվեցին ադրբեջանական «մարդասերները» Շուշի քաղաքում փոքրամասնություն կազմող հայ բնակչության հետ: Հայերը պարզապես դուրս քշվեցին Շուշիից, որտեղ հաստատված ադրբեջանական զորքերն իրենց զինանոցը պահում էին հայոց եկեղեցում՝ շատ լավ հասկանալով, որ դա զենքի պահեստի ամենաանվտանգ տեղն է, քանի որ հայերը չեն զնդակոծի իրենց սրբավայրը:

Հիշողության կորստի մասին է վկայում նաև այն իրողությունը, որ Ռ. Մեխիևը մոռանում է անգամ ընթերցողին ներկայացնել Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ ինքնավարություն ստացած Լեռնային Ղարաբաղի սահմանները, որովհետև դրանք ներառել են ոչ միայն ԼՂԻՄ-ի տարածքը, այլև Գյուլիստանը և մինչև Չանգեզուրի գավառ ձգվող հողերը: Դրա համար կարելի է ծանոթանալ մինչև 1921 թ. հուլիսի 5-ը հրատարակված քարտեզներին, որոնցում Լեռնային Ղարաբաղն անմիջական սահման ուներ Հայաստանի ԽՍՀ-ի հետ: Էլ չենք խոսում այն հողերի մասին, որոնք հայաբնակ էին և ձգվում էին Գյուլիստանից մինչև ներկայիս ՀՀ Տավուշի մարզը: Այդ ժամանակ ԼՂԻՄ-ի բնակչության 94 տոկոսից ավելին կազմում էին հայերը, մինչդեռ՝ խորհրդային իշխանության

տարիներին ամեն ինչ արվեց մարզի էթնիկական պատկերը փոխելու համար: Ադրբեջանական իշխանությունների թեթև ձեռքով ադրբեջանական բնակչության քանակը հասավ 25 տոկոսի: Դա անթաքույց **գաղութացում** էր, որին զուգահեռ գործում էր նաև Նախիջևանի հայերի՝ կրկին Նախիջևան վերադարձի վրա ադրբեջանական իշխանությունների դրած արգելքը: Ահա այսպես էին հարգում Ադրբեջանի իշխանությունները իրենց ստանձնած պարտավորությունները: Եթե Ռ. Մեհթիևին բվում է, թե հայերը մոռացել են Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հայ բնակչությանը դուրս մղելու և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը գաղութացնելու ադրբեջանական քաղաքականությունը, ապա չարաչար սխալվում են

Այս համատեքստում է նաև ներկայիս Հայաստանի Հանրապետությունը նույնպես ադրբեջանցիներով գաղութացված տեսնելու երազանքը փայվալող Ռ. Մեհթիևի այն պնդումը, թե Հայաստանը (իմա՝ Հայաստանի Հանրապետությունը – Բ.Հ.) մեկուսացված է և դեպի ծով ելք չունի, իսկ նրա բնակչությունն անընդհատ պակասում է, որովհետև հայերը... եկվորներ են: Եվ ո՞վ է այդ մասին գրում, մարդ, որի նախնիները եկել են Ալթայից: Ռ. Մեհթիևին առաջարկում ենք ծանոթանալ Մուրադ Աջիի «Древняя история тюрков и Великой степи» (Москва, 2007) (Թյուրքերի և Մեծ տափաստանի հին պատմությունը, Մոսկվա, 2007) աշխատությանը, որի հեղինակի հայ չլինելը կասկածից դուրս է: Եվ այդ գրքին որպես բնաբան ընտրված են հետևյալ խոսքերը՝ «Наша родина-степь, а колыбель-Алтай» («Մեր հայրենիքը տափաստանն է, իսկ բնօրրանը՝ Ալթայը»): Մինչդեռ իրականությունն այն է, որ հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում ու շրջակա տարածքներում, և հայերը մինչև 21-րդ դար հասած այն միակ ժողովուրդն են, որը չի հեռացել իր նախահայրենիքից:

Այնպես որ, եթե եկվորությունն է արտագնացության պատճառը, ապա Ռ. Մեհթիևին հարկ է ուշադրություն դարձնել վերջին տասնամյակներում ձևավորված Ռուսաստանի Դաշնության շուրջ 3 միլիոն կազմող ադրբեջանական համայնքի վրա, որի «...հայրենիքը տափաստանն է, իսկ բնօրրանը՝ Ալթայը»:

Ռ. Մեհթիևը հայերին հռչակում է եկվորներ, իսկ նրանց հայրենիքի արևելյան մասը՝ Արևմտյան Ադրբեջան, մինչդեռ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքի կեսը հայկական պատմական հողեր են: Ինչ վերաբերում է Կուրի ձախափնյակին, ապա գոնե մ.թ. I դարից այն վերածվել է կովկասյան-լեզգինական ժողովուրդների երկրամասի, որոնք այդպես էլ միասնական էթնոսի չվերածվեցին, բայց այսօր էլ բնակվում են ներկա Ադրբեջանի հյուսիսում և Ռուսաստանի Դաշնության մասը կազմող Դաղստանում և բոլոր իրավունքներն ունեն հավակնելու եկվոր թուրք-ադրբեջանցիների կողմից օկուպացված իրենց պատմական հողերին:

Ուրեմն՝ իրականում Ռ. Մեհթիևին զայրացնում է այն միտքը, որ հայերը տեղաբնիկ կամ ավտոխթոն ժողովուրդ են, իսկ թուրք-ադրբեջանցիները՝ եկվոր տարր: Բայց անգամ նման ելակետային պայմաններում հայկական կողմը հանդես է գալիս ազգերի ինքնորոշման դիրքերից, այսինքն՝ հիմնվում է ոչ թե **պատմական**, այլ **միջազգային իրավունքի** նորմերի վրա: Եթե հայկական կողմը առաջնորդվեր մեհթիևների ցեղապաշտական կատեգորիաներով, ապա պետք է առաջադրեր եկվոր ադրբեջանցիներին Ալթայ վերադարձնելու խնդիրը: Իսկ եթե

ողջ աշխարհին առաջնորդվեր նման մտածելակերպով, չպետք է փլուզվեին Բրիտանական կայսրությունը կամ ԽՍՀՄ-ը, և Ադրբեջանը նույնպես անկախ պետություն դառնալու իրավունք չէր ունենա: Բայց Ադրբեջանի՝ որպես պետության սահմանները լեզվաբան չէր ունենա ԽՍՀՄ-ի փլուզման համատեքստում, որովհետև նա իրեն հռչակել է թուրքական բանակի կողմից ստեղծված «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության» իրավաժառանգորդը, որի կազմում չկային Ղարաբաղն ու Նախիջևանը:

**Այս ամենը վկայում է, որ հիշողության կորստի ակնհայտ ախտանշաններ դրսևորող Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը կամ այն մարդիկ, որոնք գրել ու նրան են հանձնել «Գորիս-2010. արևուրդի թատրոնի տարեշրջանը» կեղծագիրը, տառապում են սեփական արատները ուրիշներին վերագրելու հիվանդությամբ, ինչը պատմաբաղադրական թերարժեքության բացահայտ խոստովանություն է:**

## 2. Պատմագիտական ասպատակությունների սկիզբը

Համարելով, որ միջազգային իրավունքի հետ կապված բոլոր հիմնախնդիրները լուծել է, Ռ. Մեհթիևն անցնում է պատմագիտական հարցերին՝ հայտարարելով, որ հայկական կողմի փաստարկային բազան և՛ միջազգային իրավունքի, և՛ պատմության հարցերում եղել է մնում է թույլ, քանի որ պատմական մասով այն իբր՝ հիմնված է ոչ գիտական եզրակացությունների, իսկ իրավական առումով՝ միջազգային իրավունքի դրույթների ազատ մեկնաբանության վրա: Բանը հասնում է այնտեղ, որ պատմության կեղծարարությունների ասպարեզում անփոփոխ առաջամարտիկի «պատիվը» միայն Թուրքիայի հետ վիճարկելու իրավունք ունեցող Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը փորձում է նման «պատիվ» վերագրել Հայաստանին:

**Ուստի՝ փորձենք հեթո՞վ ներկայացնել Ռ. Մեհթիևի անունից առաջ քաշված տեսակետները և այլևայլ աղբյուրների հիման վրա պարզենք ողջ ճշմարտությունը:**

Հենց սկզբից հարձակման անցնելու և հայկական կողմին կեղծարարության մեջ մեղադրելու համար Ռ. Մեհթիևը որպես «փաստարկ» է բերում հետևյալ անհիմն պնդումը, թե իբր՝ իրականությանը չեն համապատասխանում պատմության մեջ առաջինը քրիստոնեությունը պետական կրոն ընդունած երկիր ներկայանալու՝ հայերի հավակնությունները: Եվ իրեն ծիծաղելի վիճակում չդնելու համար «համեստորեն իրաժարվելով» քրիստոնեության ընդունման առաջնության հարցում «ադրբեջանական հավակնություններից» ու հայտարարելով, որ ադրբեջանական պատմագրությունը երբեք չի պնդել, թե կովկասյան ալբաններն առաջինն են ընդունել քրիստոնեությունը, Ռ. Մեհթիևը փորձում է նույն պատվից զրկել նաև Հայաստանին:

Նրա խոսքերով՝ գիտությանը վաղուց արդեն հայտնի է, որ դեռևս մ.թ. II դարի վերջերին, այսինքն՝ Հայաստանից ավելի քան մեկ դար առաջ, քրիստոնեությունը պետական կրոն է դարձել արամեական Եդեսիայի թագավորությունում: Այնուհետև բերվում են օտար լեզուներով ուսումնասիրություններ, որոնք իբր՝ հավաստում են այն «փաստը», որ Եդեսիայի Աբգար Բար Մանու (Աբգար V կամ Մանու VIII) թագավորը 165 թ. ընդունել է քրիստոնեությունը որպես պետական

կրոն: Այլ խնդիր է, որ հեղինակը չի էլ մտածում համապատասխան պատմական սկզբնաղբյուրները մատնանշելու մասին և բավարարվում է Սամուել Չիֆհամի, Հերբերտ Լոքյերի, Ադոլֆ ֆոն Հարնակի և Իրֆար Շահիդի աշխատությունները նշելով<sup>6</sup>:

Բոլորովին չխորանալով հարցի մանրամասների մեջ, որովհետև խնդրի էությունը դրանից չի փոխվում, պատրաստ ենք քննարկելու հեղինակի առաջարկած 165 թվականը, թեև դրա համար հիմք հանդիսացած՝ Լաբուրնայի կամ Դեբուրնայի պատմությունը այլևայլ մտորումների տեղիք է տալիս: Իսկ ո՞վ էր հիշյալ Աբգար թագավորը: Ընդամենը՝ Հռոմին ենթակա և **կայսրության մեջ մտնող** ստորակա «արքա»: Իսկույն ինձ կառարկեն, թե Մեծ Հայքի թագավորությունն էլ է վասալական կապերի մեջ գտնվել Հռոմեական կայսրության հետ: Միանգամայն ճիշտ է, սակայն Մեծ Հայքի թագավորությունը, եթե չհաշվենք Տրայանոս կայսեր կողմից 114-117 թվականների կարճատև ռազմակալումը, մինչև 387 թվականը եղել է առանձին թագավորություն և չի մտել Հռոմեական **կայսրության մեջ**: Իսկ Աբգար թագավորը ոչ թե առանձին երկրի տիրակալ էր, այլ ընդամենը՝ կայսրության մեջ մտնող մի փոքրիկ երկրամասի խամաճիկ «արքա»: Հետո, անկախ այն բանից, որ նա ընդունել է քրիստոնեությունը, ամենևին էլ փորձ չի արել արմատախիլ անել մյուս կրոնները: Ավելորդ է ասել, որ նա չէր էլ հանդգնի դիմել նման քայլի, քանի որ դա կարող էր շարժել հեթանոսության պաշտպան հռոմեական կայսեր զայրույթը: Այսպիսով՝ կհամարվի՞ր այս փաստը քրիստոնեության ընդունման փորձ, թե ոչ, դրանից հարցի էությունը չի փոխվում: Քրիստոնեությունը Եդեսիայի թագավորությունում ընդամենը դառնում էր հավասարազոր կրոնների մեջ **առաջինը, բայց ո՛չ պետականը**:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Մեծ Հայքի թագավորությունում. հայոց արքա Տրդատ Գ-ն և Գրիգոր Լուսավորիչն իրոք քրիստոնեությունը հռչակեցին պետական կրոն և արգելեցին ու բառիս իսկական իմաստով՝ փորձեցին արմատախիլ անել հեթանոսությունը: Մինչդեռ, եթե շարժվենք Ռ. Մեհթիսի մտածելակերպով, ապա քրիստոնեությունն արդեն Միլանի 313 թ. էդիկտով պետական կրոն էր դարձել Հռոմում: Բայց իրողությունը միանգամայն այլ է, քանզի այդ նշանավոր էդիկտով քրիստոնեությունը Հռոմեական կայսրությունում ընդամենը դարձել էր մյուս կրոններին հավասարազոր կրոն: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ քրիստոնեությունը Հռոմեական կայսրությունում պետական կրոնի վերածվեց միայն տասնյակ տարիներ անց՝ Թեոդոսիոս Ա կայսեր կառավարման տարիներին:

Այնպես որ, դուր է գալիս նման փաստը Ռ. Մեհթիսին, թե ոչ, Մեծ Հայքի թագավորությունն առաջին երկիրն է, ուր քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն՝ 4-րդ դարի սկզբին: Իհարկե, ի վերջո Հայաստանը կարող էր և առաջինը չլինել քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրների մեջ, և դրանում ոչ մի դժբախտություն չէր լինի: Հայ պատմաբաններն ամենևին էլ չեն ձգտում արհեստականորեն հնացնել պատմական իրադարձությունները, ինչպես փորձեցին մեր հարևան վրացիները, երբ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների հետ կապված՝ իսկույն գիտաժողով հրավիրեցին և փորձեցին ցույց տալ, որ քրիստոնեությունը Վրաստան մուտք է գործել 2000 տարի առաջ: Հայոց

6 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 7-8.

պատմությունն այնքան հին է ու հարուստ, որ հայ պատմաբանները՝ ի տարբերություն Ռ. Մեհթիևի, բոլորովին կարիք չունեն կեղծարարությամբ զբաղվելու: Պարոն Ռ. Մեհթիև, որքան էլ հայիոյանքի տարափ թափեք ձեր արևմտյան հարևանի վրա, միևնույնն է՝ պատմական փաստը մնում է փաստ:

Այնուհետև՝ Ռ. Մեհթիևը մեղադրում է ՀՀ նախագահին Ստրաբոնի տեղեկությունները խեղաթյուրելու հարցում, թե իբր՝ Ստրաբոնը չի մատնանշել հայերի տեղաբնիկությունը Հարավային Կովկասում, որի տարածքները Հայաստանի կողմից այլ երկրներից ու ժողովուրդներից «գավթած հողեր» են<sup>7</sup>: Անհասկանալի է. Ռ. Մեհթիևն ի՞նքն է միամիտ, թե՞ ուրիշներին է միամիտի տեղ դնում: Հենվենք Ստրաբոնի վկայության ճիշտ այն հատվածի, վրա, որը մեջբերում է Ռ. Մեհթիևը. «Պատմությունն ասում է, որ Հայաստանը՝ նախապես փոքր, աճեց այնուհետև Արտաշեսի և Ջարեհի ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին և նրա անկումից հետո՝ թագավորներ, մեկը՝ Ծոփքի, Ալիսենեի, Օդոմանտիսի և այլ գավառների վրա, իսկ մյուսն Արտաշատի վրա: Երկուսն էլ մեծացան՝ շրջակա ազգերից գրավելով զանազան գավառներ, մարերից՝ Կասպիենեն, Փավնիտիսը և Բաստրոպեդան, վրացիներից՝ Պարիադրես [Լեռան] ստորոտի գավառները և Խորգենեն և Գոգարենեն (իմա՝ Գուգարքը - Բ.Հ.), որը Կուրի մյուս կողմն է, խալյուբներից ու մոսիոնյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն (իմա՝ Դերջանը- Բ.Հ.), որոնք Փոքր Հայքին սահմանակից են, թեև նրա մասերը չեն, Կատաոններից՝ Ալիլիսենեն (իմա՝ Եկեղիքը- Բ.Հ.) և Անտիտավրոսի [գավառը] և ասորիներից՝ Տամոնիտիսը (իմա՝ Տմորիքը- Բ.Հ.), այնպես որ բոլորը միալեզու եղան»<sup>8</sup>:

Այո՛, Արտաշեսը և Ջարեհը հողեր են գրավել հարևան երկրներից ու ժողովուրդներից: Բայց, ի՞նչ է, Ռ. Մեհթիևին թվում է, թե գրավելուն պես «նվաճվածները» անմիջապես սկսեցին հայերե՞ն խոսել գիտությանն անհայտ արագուսույցի միջոցով: Իրականությունն այն է, որ Երվանդունիների գահակալության վերջին շրջանում օգտվելով Հայոց թագավորության թուլացումից, հարևան երկրները գավթել էին վերջինիս ծայրամասային երկրամասերը, և Արտաշես Ա-ն ու Ջարեհը պարզապես ետ էին վերադարձնում հայկական երկրամասերը հարևան նվաճողներից: Այլ խոսքով՝ հայկական երկու թագավորություններին էին միացվել կորսված, բայց էթնիկ առումով հայկական երկրամասերը: Միայն այդ դեպքում էր հնարավոր միացված երկրների բնակչության միալեզու լինելը:

Սակայն խնդիրն ունի մի այլ կողմ ևս: Թերևս հեղինակի մտքով անցնում է, թե Արտաշեսը հողեր է գրավել այսպես կոչված՝ Կովկասյան Ալբանիայից կամ Աղվանքից: Խորհուրդ ենք տալիս շատ չոգևորվել, որովհետև, երբ հայկական թագավորությունները ընդարձակվում էին հայկական ու հայաբնակ երկրամասերի միացումով՝ մարերից, վրացիներից, խալյուբներից, մոսիոնյկներից ու ասորիներից, սկզբնաղբյուրներում ամենաանճանակնարկ անգամ չկա, որ Հայոց Արևելից կողմերը, որ աղբբեջանցի պատմաբանները համարում են Աղվանքի մաս, միացվել են Մեծ Հայքի թագավորությանը: Պարզապես այս կեղծիքի ջրաղացին ժամանակին ջուր են լցրել որոշ հայ պատմաբաններ: Մինչդեռ, Ուտիքը որպես հայոց թագավորների ձեռնաճակատ է

7 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010.  
8 The Geography of Strabo» with an english translation by Horace Leonard Jones, in eight volumes, London, 1969, XI, 14.5.



Երվանդ Վերջին թագավորի օրոք (մ.թ.ա. III դարի վերջ) և բնական է, որ հանդիսացել է նաև Արտաշես Ա-ի Մեծ Հայքի թագավորության մասը<sup>9</sup>:

Ռ. Մեհթիևին շատ է հետաքրքրում այն հարցը, թե որքա՞ն ժամանակ է Հայաստանը եղել անկախ պետություն: Նա շուտասելուկի նման կրկնում է պատմության թուրքական կեղծարարներից վերցված այն հերյուրանքը, թե իբր՝ Հայաստանը մինչև 1918 թ. շատ կարճ ժամանակով է անկախ եղել՝ գտնվելով փաստական կամ բացարձակ կախվածության մեջ այլ տերություններից: Հետևում է հաջորդ եզրակացությունը՝ կարճատև անկախության շրջանում հայոց թագավորները փորձել են իրենց իշխանությունը տարածել հարևան երկրների վրա և իբր՝ բացառությամբ Տիգրան Մեծի ժամանակաշրջանի, տվյալներ չկան, որ Հայաստանը տիրել է ժամանակակից Ադրբեջանի տարածքին: Եվ միայն Տիգրան Մեծի օրոք է, որ Հայաստանը ժամանակավորապես իշխել է Արաքսից հյուսիս ընկած հողերի վրա: Միաժամանակ, ընդունելով, որ Ստրաբոնը Օրխիստենե-Արցախը հիշատակում է Հայաստանում, Ռ. Մեհթիևը անմիջապես արձանագրում է, թե իբր՝ հույն աշխարհագրագետը չի հայտնում, որ այնտեղ հայեր են ապրում<sup>10</sup>:

Ինչ խոսք, գործ ունենք այնպիսի պարզունակ կեղծարարի հետ, որի ստի ոտքերը, ինչպես ժողովուրդն է ասում՝ կարճ են: Սկսենք այն հանգամանքից, որ Օրխիստենե-Արցախը չի պատկանում այն երկրամասերի թվին, որոնք իրենց թագավորություններին էին միացրել Արտաշեսը և Ջարեհը: Եվ եթե նրանց կողմից միավորված երկրների բնակչությունը, Ստրաբոնի խոսքերով՝ նույնպես հայալեզու էր, ապա ավելորդ է անգամ խոսել մինչ այդ էլ Մեծ Հայքին մաս կազմող Օրխիստենե-Արցախի ոչ հայկական լինելու մասին: Չարմանալին այն է, որ հեղինակին բացարձակապես չի հուզում այն իրողությունը, որ եթե իր աշխատության տվյալ հատվածում Ստրաբոնը չի հիշատակում Օրխիստենե-Արցախի հայերին, ապա ընդհանրապես տեղեկություն չկա այն մասին, որ Օրխիստենե-Արցախի բնակիչները այլազգիներ են: Թերևս նկատելով այս հանգամանքը հեղինակը հայտարարում է, թե կան բազմաթիվ այլ աղբյուրներ և վկայություններ, որոնք իբր՝ հավաստում են Արցախում աղվանական բնակչության առկայությունը: Եվ սեփական հորինվածքը հիմնավորելու համար բերում է Ստրաբոնի այն հաղորդումը, թե Կուրը հոսում է Ալբանիայով<sup>11</sup>: Այս տեղեկության իսկությունը դեռևս կքննարկենք, սակայն մեզ զարմացնում է այն իրողությունը, որ Ռ.Մեհթիևը միանգամայն գիտակցաբար աչքաթող է անում Ստրաբոնի մյուս վկայությունները:

Այսպես, ինչու՞ է հեղինակը «նռանում» հիշել այն փաստը, որ համաձայն Ստրաբոնի, Շակաշենը (Սակասենեն) և Արաքսենեն Հայաստանի մաս են կազմում<sup>12</sup>: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանի մեջ են գտնվել Օրխիստենե-Արցախից հյուսիս տարածվող Շակաշենը և արևելք գտնվող Օտենե-Ուտիքը: Բերենք այլ հաղորդումներ Ստրաբոնի «Աշխարհագրությունից».

**«Մասամբ Վրկանաց ծովի և սրա ու Պոնտոսի միջև գտնվող ամբողջ պարանոցի հատվածում, գտնվում է Հայաստանի մեծ մասը...»<sup>13</sup>:**

9 Տե՛ս Պատմութիւն Մովսիսի Խորենացւոյ, Տփղիս, 1913, գիրք ԽԴ, գլ. ԽԵ:

10 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 9.

11 Տե՛ս Strabo, XI, IV, 2 հեղինակը սխալմամբ գրել է XI, IV, 1:

12 Անդ, II, I, 14:

13 Անդ, II, V, 31:

«Մոսքիկեն, ուր կա նշանավոր մի տաճար, երեք մաս ունի, առաջինը բռնում են կողքիսացիք, երկրորդը՝ վրացիք, երրորդը՝ հայերը»<sup>14</sup>:

«Մեջտեղում կա մի դաշտավայր՝ ոռոգված գետերով, որոնցից մեծագույնն է Կուրը, որ սկիզբ է առնում Հայաստանից, մտնում է անմիջապես հիշյալ դաշտավայրը, ընդունում է իր մեջ Արագոսը, որ բխում է Կովկասից, ինչպես և ուրիշ ջրեր և մի նեղ հովտի միջով մտնում է Աղվանք: Այս երկրի և Հայաստանի միջև հոսելով՝ անցնում է բազմաթիվ հույժ մարդաշատ դաշտավայրերով, ընդունում է իր մեջ նաև ուրիշ շատ գետեր, ինչպիսիք են Ալագոնիոսը, Սանդրբանեսը, Ռոյտակեսը և Քանեսը, բոլորն էլ նավարկելի, և թափվում է Կասպից ծովը: Առաջ այս գետը կոչվում էր Կորոս»<sup>15</sup>:

«...Իսկ (Աղվանքի - Բ.Հ.) հարավային սահմանի ողջ երկարությամբ տարածվում է Հայաստանը, որ հարուստ է դաշտերով ու լեռներով, ինչպես Կամբյուսենեն (իմա՝ Կամբեճանը-Հ.Բ.), որ գտնվում է այնտեղ, ուր Վիրքը, Աղվանքը և Հայաստանը իրար են սահմանակցում»<sup>16</sup>:

«...Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Աղվանքի ծայրը և թափվում է Կասպից ծովը, և սրա հետ Շակաշենը (իմա՝ Սակասենն - Բ.Հ.)՝ սահմանակից է Աղվանքին և Կուր գետին, հետո Գոգարենեն (Գուգարքը- Բ.Հ.)»<sup>17</sup>:

«Երկրի (Հայաստանի-Բ.Հ.) մեծությունը Թեոփանեսը դնում է հարյուր սքոյնաս, իսկ երկարությունը՝ կրկնակի դնելով մեկ սքոյնասը քառասուն ստադիոն: Սա չափազանցությամբ է տրված: Ավելի մոտ է ճշմարտությանը՝ երկարությունը դնել, ինչ որ ասել է լայնության համար, իսկ լայնությունը՝ դրա կեսը կամ մի քիչ ավելի»<sup>18</sup>:

Բերված փաստերը, որոնց այլ սկզբնաղբյուրներով հարստացնելը ոչ մի դժվարություն չի ներկայացնում, աներկբայորեն ցույց են տալիս, որ պարոն Ռ. Մեհթիկը պարզապես կեղծում է: Նրա հիմնական կռվանը Կուր գետի՝ Աղվանքով հոսելն է, ինչպես հաղորդում է Ստրաբոնը: Բայց այս հարցը ևս ունի իր բացատրությունը, որն այժմ կներկայացնենք:

Խնդիրն այն է, որ և՛ Ալբանիա, և՛ Աղվանք անվանումները զուտ հայկական ծագում ունեն և ծագում են հայերեն «աղ» բառից: Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ Սիսակը՝ Հայկի սերունդներից, ժառանգում է «Աղուանից դաշտը» և նույն դաշտի լեռնակողմը՝ Երասխից մինչև Հնարակերտ ամրոցը և «Աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա: Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի եւ քաջ կարգեցաւ կողմնակալ բիրատր ի Պարթեւէն Վաղարշակայ»<sup>19</sup>:

Մովսես Կաղանկատվացին, որն ամբողջությամբ օգտվել է Պատմահորից, «Աղուանք» անվան առաջացումը կապում է Առանի և ոչ թե Սիսակի քաղցր բարքի հետ<sup>20</sup>: Հայտնի է, որ «աղու»-ն առաջացել է «աղ»-ից՝ հանդիսանալով վերջինիս գործիական հոլովի գրելածնը: «Աղու» նշանակում է աղով համեմված, այսինքն՝ անուշ, քաղցր, համեղ և, ինչպես կտեսնենք, նաև արգավանդ<sup>21</sup>: Սակայն միշտ չէ,

14 Անդ, XI, I, 18:  
15 Անդ, Strabo XI, III, 2-3:  
16 Անդ, XI, IV, 1:  
17 Անդ, XI, XIV, 4:  
18 Անդ, XI, XIV, 11:  
19 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը:  
20 Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 8 (գլ. Դ):  
21 Տե՛ս Զր. Աճառյան, Զայերեն արմատական բառարան, հատ. Ա, Եր., 1971, էջ 114-117:

որ «ադ» բառի գործիականը եղել է «ադու»: Դրան նախորդել է «ալով» ձևը, որը փոխառել է վրացերենը՝ ծնունդ տալով *gaaloveba* բառին, որը վրացերենում նշանակում է քաղցրանալ, անուշ համ ստանալ<sup>22</sup>:

Սակայն, «ալով» ձևին նախորդել է վաղնջական «ալոբ» ձևը: Սկզբնապես հայերը որպես «արգավանդ դաշտի երկիր»՝ «Ալոբանք» էին կոչում Կուր գետի աջափնյակը, ինչպես պարզ երևում է Մովսես Խորենացու հաղորդումից: «Ալոբանք»-ը սուկ աշխարհագրական հասկացություն էր, և քանի որ Կուրի ձախափնյակը կազմում էր այդ մեծ և ընդարձակ դաշտի շարունակությունը, Աղվանք արշաված հռոմեացիների այն հարցին, թե ինչ երկիր է գտնվում Կուրի ձախափնյակում, հայերը պատասխանեցին «Ալոբանք», այսինքն՝ «արգավանդ դաշտի երկիր»: Հռոմեացիները վերածեցին «Ալոբանք»-ը «Ալոբանիա»-ի, և քանի որ հեռավոր Շոտլանդիայում և Գալլիայում կային Ալբանիաներ, իսկ Իտալիայում՝ Ալբանուս մոնս (իմա՝ Ալբանական լեռներ-Բ.Հ.), դրանց նմանությամբ Ալոբանիան վերածեցին Albania-ի: Այս ձևը պահածոյացվեց հունահռոմեական աշխարհում, սակայն հայերենում ենթարկվեց հայերենին հատուկ հնչյունական փոփոխությունների: «Ալոբանք»-ն այնուհետև վերածվեց «Ալովանք»-ի, իսկ «ով»-ի «ու» վերածման հետևանքով՝ «Ադուանքի»: Շատ ավելի ուշ, երբ «լ»-ն սկսեց «դ» արտասանվել, «Ալուանք»-ը հայերենում դարձավ «Ադուանք»: Ամեն ինչից դատելով՝ այդ մասին իմացել է նաև ամասեցի մեծ աշխարհագրագետը՝ Ստրաբոնը, երբ գրում է, որ Կուրն անցել է Ալբանիայի միջով, այլ խոսքով՝ Ալբանական դաշտի: Սա է ճշմարտությունը, թեև այդ մասին կարելի էր և չգրել, որովհետև այսպես կոչված **ալբան-ալվանների՝ ադրբեջանցիների նախնիներ լինելու մասին պնդումը հավասարազոր է հույների՝ թուրքերի նախնիներ համարելուն:**

Ուստի՝ ադրբեջանցիների համար ոչ մի նշանակություն չունի՝ Հայաստանը տիրե՞լ է Աղվանքին, թե՞ ոչ: Իրականությունն այն է, որ այդ երկիրը ոչ միայն Տիգրան Մեծի օրոք, այլև հետագա դարերում բազմիցս հայտնվել է Մեծ Հայքի թագավորության նկատմամբ ստորակա վիճակում: Փաստեր, ինչքան ասես, կարելի է բերել դրա օգտին: Պարզապես հիշատակենք դրանցից մեկը: Մեծ Հայքի թագավորության «Գահնամակ» կամ ուսումնասիրողների կողմից՝ «Ջորանամակ» կոչված փաստաթղթում ասվում է, որ հայոց բանակի թվաքանակն այլ գրավյալ աշխարհներում գտնվող զինվորների հետ կազմել է 120 000 մարդ: Շատ կարևոր է, որ այդ աշխարհները համարվում են գրավյալ: Հասկանալի է, որ Հայոց թագավորությունը չէր կարող տիրել իր երկու հարևան մեծ տերություններին, ուստի խոսքը հստակ վերաբերում է Վիրքին ու Աղվանքին<sup>23</sup>:

Ռ. Մեթիևի կողմից բարձրացված հարցերից մեկն ադրբեջանական ժողովրդի կազմավորման խնդիրն է, որովհետև, ըստ հայ հեղինակների՝ ադրբեջանցիները որպես ազգ հանդես են եկել մեզանից մեկ դարից էլ պակաս ժամանակ առաջ, և ինչ եղել է այդ տարածքում մինչև XX դարի սկիզբը, ադրբեջանցիների հետ կապ չունի:

Անկեղծորեն ասած՝ մեր արևելյան հարևանները կկոչվեն թյուրքեր թե՞ ադրբեջանցիներ, գործնականում ոչ մի նշանակություն չունի: Որոշակի փաստ է, որ թյուրք-սելջուկյան ցեղերը առաջին անգամ հայտնվեցին ներկայիս Ադրբե-

22 Անդ, էջ 116:

23 Տես Ռ. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 252.

ջանի Հանրապետության արևելյան և մասամբ՝ արևմտյան հատվածներում միայն XI դարի կեսերին: Իսկ թե ինչպե՞ս են ընթացել ժողովրդագրյացման գործընթացները, կարելի է հստակ արձանագրել միայն XVI դարի սկզբի իրադարձություններով: Կարող է հարց ծագել, թե ինչու՞ սկսել միայն XVI դարի սկզբի իրադարձություններից: Հարցի պատասխանը հետևյալն է. ո՛չ կարա-կոյունլուների տիրապետության և ո՛չ էլ ադ-կոյունլուների իշխանության շրջանում այդպես էլ որոշակի ժողովուրդ չձևավորվեց: XVI դարի սկզբներին ղրզըրաշական ցեղերի կողմից ստեղծվեց Սեֆյան պետությունը, որն ադրբեջանցի պատմաբանները հակված են համարելու «ադրբեջանական»: Բոլորովին էլ վեճի մեջ չենք մտնում մեր «հնարամիտ» ընդդիմախոսների հետ, քանզի ղրզըրաշների պետության էությունը, չնայած իշխանության գլուխ անցած թյուրքական ցեղերին, անվիճելիորեն պարսկական էր, ինչը վեր է ամեն մի կասկածից: Խնդիրն այն է, որ այդ պետության հիմքում դրված էր ոչ թե ազգային սկզբունքը, այլ **շիա դավանանքը**: Եթե անգամ հիպոթետիկ կերպով ընդունենք, որ պետությունը եղել է այսպես կոչված՝ «ադրբեջանական», միևնույնն է՝ ղրզըրաշական ցեղերի շրջանում միասնական ժողովրդի մտածելակերպ ու հոգեկերտվածք գոյություն չուներ: Եվ դա մեծապես պայմանավորված էր սեփական պետության բացակայությամբ: Ուրեմն՝ կարո՞ղ է արդյոք որևէ ադրբեջանցի պատմաբանի մտքով անցնել, թե, օրինակ՝ Շահ-Աբբասը չի եղել պարսից շահ, չնայած նրա թյուրքական ծագումը վեր է ամեն կասկածից:

Հայտնի է, որ սեփական պետության գոյության պայմաններում ֆրանսիական ժողովրդի ձևավորումը տևեց մի քանի դար: Նույնը կարելի է ասել ռուս և գերմանական ժողովուրդների մասին: Ուստի՝ եթե XVI դարի սկզբին մենք գործ ունենք ոչ թե միասնական ժողովրդի, այլ ցեղերի հետ, ապա պահանջվելու էր առնվազն մի քանի դար այն ժողովրդի կազմավորման համար, որը կոչվել է թուրք, իսկ ներկայումս անվանվում է ադրբեջանցի: Պարսկական պետության պայմաններում, երբ ամեն ինչի հիմքում դրված էր իսլամի շիա դավանանքը, ժողովրդագրյացման գործընթացներն առանձնապես արագ չէին: Եվ պատահական չէ, որ Իրանի թյուրքալեզու բնակչության շրջանում միայն վերջերս են ի հայտ գալիս առավել կամ պակաս չափով ազգային զգացումներ: Եթե անգամ ընդունենք, որ արդեն պարսկական տիրապետության շրջանում նախադրյալներ էին հասունացել ադրբեջանական ժողովրդի ձևավորման համար, ապա պետք է եզրակացնենք, որ այդ գործընթացներն արագացան միայն ռուսական տիրապետության շրջանում: Համենայն դեպս, **19-րդ դարի երկրորդ կեսից ավելի շուտ հնարավոր չէ մատնանշել ադրբեջանական ժողովրդի վերջնական կազմավորումը**:

### 3. Տեղանունների նենգափոխման աշխատակարգերը

Միայն ժպիտներ կարող են շարժել Ռ. Մեհթիևի մտավարժանքներն «Ադրբեջան» անվանման շուրջ<sup>24</sup>: Սկսենք այն խնդրից, թե ինչպե՞ս են առաջացել Ատրպատական, իսկ դրանից էլ՝ Ադրբեջան և Ազարբայջան աշխարհագրական հասկացությունները:

«Ատրպատական» անվանումը տրվել է Մարաստանի արևմտյան հատվա-

<sup>24</sup> Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, с. 10-11.

ծին, որը որպես սատրապություն հանձնվել էր Ատրպատին, որի անունը ոչ այլ ինչ է, քայց եթե ոչ՝ «կրակի պետ» կամ «կրակի քուրմ»։ Եվ եթե հետագայում առաջացավ Ատրպատականի թագավորությունը, ապա այն սուկ Մարական պետություն էր։ Իսկ մարերը պարզապես իրանական ցեղեր էին և ոչ մի կերպ չեն կարող համարվել աղբրեջանցիների նախնիներ։ Այն իրանական երկիր էր Մասանյանների օրոք, ինչպես նաև արաբական տիրապետության շրջանում։ Ուստի, անկախ այն հանգամանքից, թե արաբական տիրապետության շրջանում Ազարբայջանը՝ որպես վարչական միավոր, ինչ տարածքներ է ընդգրկել, այն ընդամենը վարչական միավոր էր։ Եթե Ռ. Մեհթիևն այդքան օբյեկտիվ է, ապա ինչու՞ չի նշում, որ **արաբական Արմինիա վարչական միավորը ընդգրկում էր ոչ միայն Հայաստանը, այլև Վիրքը և Աղվանքը**, որը հեղինակը մշտապես կոչում է Կովկասյան Ալբանիա։ Թո՛ղ Ռ. Մեհթիևին հայտնի լինի, որ վարչական միավորները կարող են և՛ ընդարձակվել, և՛ փոքրացվել։ Ըստ որում, տվյալ դարում Ազարբայջանը Արաբական խալիֆայության վարչական միավոր էր։ Եվ եթե հեղինակը հետաքրքրվում է Արմինիա ոստիկանության վարչական տարածքով և սահմաններով, ապա կարող է դիմել Ա. Տեր-Ղևոնդյանի “Армения и Арабский халифат” (Ереван, 1977) (Հայաստանը և Արաբական խալիֆաթը, Եր., 1977) աշխատությանը։

Ռ. Մեհթիևը վկայություններ է բերում այլևայլ հեղինակներից՝ ցույց տալու համար, թե իբր՝ «Աղբրեջանը» տարածվել է Երասխից և՛ հյուսիս, և՛ հարավ։ Մասնավորապես՝ նա հենվում է Թավրիզում անգլիական հյուպատոս Քեյթ Աբբոթի 1864 թ. հուլիսի վրա, որտեղ ասված է. «Երկիրը, որ հայտնի է պարսիկներին որպես Աղբրեջան, բաժանված է նրանց (Պարսկաստանի) և Ռուսաստանի միջև։ Վերջինս տիրապետում է (Աղբրեջանի) 5/8-ին, տարածք, որը կազմում է 80.000 քառ. մղոն, կամ էլ հավասար է Մեծ Բրիտանիայի տարածքին, այսպիսով, 50.000 քառ. մղոնը պատկանում է Ռուսաստանին և 30.000 քառ. մղոնը՝ Պարսկաստանին։ Ռուսական մասը սահմանակցում է հյուսիսից և հյուսիսարևմուտքից Կովկասյան լեռներին, որոնք ձգվում են մինչև Բաքվի շրջակայքը՝ Կասպից ծովի ափերը։ Արևմուտքում նրա մեջ մտնում են Իմերեթիայի, Մինգրեթիայի, Գուրիայի և Ախալցխայի պրովինցիաները, որոնք պատկանում են այժմ Ռուսաստանին. արևելքում [սահմանը] Կասպից ծովն է, հարավում [սահմանը] ողողվում է Արաքս գետով ... Մուղանի տափաստանի վրայով մինչև Թալիշի օկրուգը և փոքրիկ Աստուրա (իմա՛ Աստարա-Բ. Հ.) գետով, որը հոսում է այդ երկրամասով դեպի Կասպից ծով։ Այդ մարզի մեջ մտնում են հետևյալ տարածքները՝ Վրաստանը կամ Գյուրջիստանը, որը բաղկացած է Կախեթիայից, Մոմխիթից, Ղազախից, իսլամական Էրիվան, Նախիջևան, Ղարաբաղ, Գյանջա, Շիրվան, Շաքի, Շամախի, Բաքու, Ղուբա, Սալյան մարզերից և Թալիշի մի մասից»<sup>25</sup>։ Հեղինակի կարծիքով՝ չի կարելի անգլիական հյուպատոսին մեղադրել կեղծիքի և «աղբրեջանական քարոզչությանը» ծառայելու մեջ։ Հետևում է եզրակացությունը, թե իբր՝ 19-րդ դարի 60-ական թվականներին Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի բնակչությունն անգամ՝ հայերի այստեղ գաղթելուց հետո գերազանցապես մնում էր մահմեդական, այլ խոսքով՝ թյուրքական։

Անշուշտ, անգլիացի հյուպատոսին չես մեղադրի «աղբրեջանական

25 Keith E. Abbott, Extracts from a Memorandum on the Country of Azerbaijan, Proceedings of the Royal Geographical Society of London, , Vol. 8, N 6 (1863-1864), pp. 275-279.

**քարոզչությանը ծառայելու»** մեջ, սակայն նրան անվերապահորեն կարելի է մեղադրել **անտեղյակության**, իսկ Ռ. Մեհթիսին՝ **անգրագիտության** մեջ: Հյուպատոսի խոսքերով՝ Ադրբեջանի մեջ արևմուտքից մտել են Իմերեթիան, Մենգրելիան, Գուրիան և Ախալցխան: Հասկանալի է, որ նրա խոսքերը մեջբերած հեղինակին դա չի հետաքրքրում, բայց նրան շատ է հուզում Երևանը, Նախիջևանը և Ղարաբաղն Ադրբեջանի կազմում տեսնելը: Սակայն, անհասկանալի է մնում, թե Թավրիզի անգլիական հյուպատոսն ինչպե՞ս է «Ադրբեջանի» մեջ մտցրել Արևմտյան Վրաստանի վերոհիշյալ պրովինցիաները, որոնք երբեք Պարսկաստանին չեն պատկանել և ամենալավ ցանկության դեպքում անգամ չէին կարող մտնել Ադրբեջան կոչված վարչական միավորի մեջ: Անգամ ապշել կարելի է, երբ հյուպատոսը փորձում է **Գյուրջիստանը** մտցնել Ադրբեջանի մեջ: Խնդիրն այն է, որ 1762 թվականից Արևելա-վրացական թագավորությունը Պարսկաստանից ընդհանրապես անկախ երկիր էր՝ մինչև Ռուսական կայսրությանը միացվելը, իսկ դրանից առաջ էլ ներկայացնում էր թեկուզև Պարսկաստանից կախյալ, բայց ստորակա երկու թագավորություններ՝ Զարթլիի և Կախեթի: Ինչպես տեսնում ենք՝ անգլիական հյուպատոսի գրածը հիշյալ տարածքների խնդրում պարզապես անհեթեթություն է: Իսկ եթե առկա է մեկ անհեթեթությունը, ապա որքա՞ն է հիմնավորված նրա վրա հենվելու՝ Ռ. Մեհթիսի բռն ցանկությունը:

Այժմ անցնենք Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և Գանձակի (Գյանջայի) այսպես կոչված՝ «մահմեդական պրովինցիաներ» լինելուն: Թավրիզի հյուպատոսը պարզապես ուղտի ականջում քնած է եղել: Եթե 19-րդ դարի առաջին երեք տասնամյակներում հայ բնակչությունը քանակով մի փոքր զիջում էր իսլամական բնակչությանը, որի մասին ստորև մանրամասն կպարզաբանենք, ապա 19-րդ դարի 60-ական թթ. խոսել նման իրադրության մասին, առնվազն ծիծաղելի է, քանի որ պատկերն այլ էր: Ուրեմն՝ փոխանակ անգլիական հյուպատոսի **անտեղյակությունը** հորթի հրճվանքով փողհարելու, պարզապես կարելի էր դիմել ռուսական պաշտոնական վիճակագրության տվյալներին, որոնք այլ պատկեր են հաղորդում: Եթե այսպիսի պատահական հաղորդումներով պետք է առաջնորդվի պարոն Ռ. Մեհթիսը, ապա կարելի է **լիակատար համոզմունք հայտնել արդի ադրբեջանագիտության ոչ գիտականության մասին**:

Անշուշտ, Հայաստանում քոչվոր թյուրքական տարրի հաստատվելու արդյունքում, բավական թիվ են կազմել թուրքական տեղանունները<sup>26</sup>: Դա պայմանավորված էր եկվոր տարրի ժամանակավոր տիրապետության փաստով: Թո՛ղ Ռ. Մեհթիսին հայտնի լինի, որ թյուրքական տարրը մեծ մասամբ թարգմանել է հայկական տեղանունները, հարմարեցրել իր լեզվին և միայն շուրջ 10 տոկոսի չափ է, որ ինքն է ստեղծել տեղանուններ՝ քոչվորականի պարզ մտածելակերպին համապատասխան: Եթե քոչվորի աչքին ջուրը սև էր երևում, ապա անմիջապես գետը կամ գետակը ստանում էր Ղարա-սու (Սև ջուր) անունը, եթե քարը քթի տեսք ուներ, ապա ստեղծվում էր Ղարա-բուրուն (Զբանման քար) անունը, եթե ժայռը հիշեցնում էր գայլի ականջ, ապա ծնունդ էր առնում Դուրդ-դուլաղ (Գայլի ականջ) անունը և այլն: Հայաստանում հիշատակվում է մահմեդաբնակ Դոնգուզու գյուղը (իմա՝ Խոզիչեն- Բ.Հ.): Հարց է ծագում, թե մահմեդականներն ինչպե՞ս կարող էին իրենց գյուղն անվանել Դոնգուզու: Իրականում մահմեդական վերաբնակիչները՝

26 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 12.

տեր դառնալով հայկական գյուղին, պարզապես հայերեն Գոնկույս (Գետակողմ-Բ.Հ.) գյուղանունը հարմարեցրել էին իրենց լեզվին ու վերափոխազատվորել այն:

Հայաստանի Մյունիք աշխարհում հայ նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Քուռակախաղաց լեռը, որը հետագայում Մյունիքում հաստատված թյուրքական ցեղերը պարզապես թարգմանել են և կոչել Ղուլուն-օյնաղ, այսինքն՝ քուռակը խաղում է<sup>27</sup>: Նույնը կարելի է ասել Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Հարսնավազ և Վայոց ձորի Հարսնասար լեռնանունների մասին, որոնք թյուրքական ցեղերը թարգմանելով վերածել են Գ-յալինդայայի (իմա՝ Հարսնաժայռ- Բ.Հ.): Ընդ որում՝ այս ցանկը կարելի է անվերջ շարունակել:

Որչափ մեզ հայտնի է, Ռ. Մեհթիևն ընդամենը փիլիսոփայական գիտությունների դոկտոր է, հետևաբար՝ առավել քան զարմանալի է, որ նա փորձում է իր գիտելիքները ցուցադրել լեզվաբանության բնագավառում: Հայերենի բազմաբարբառ լինելը նրան բերել է այն անհեթեթ մտքին (ինչը նա աշխատում է վերագրել ինչ-ինչ լեզվաբանների), թե հայերենը չի հանդիսանում մեկ ժողովրդի լեզու: Եվ դա փորձում է հիմնավորել դամբարաններից հայտնաբերված գանգերի տարբերությամբ՝ ժամանակակից հայերի գանգերից: Ավելորդ է ասել, որ սա իսկական **հիմարություն** է, որովհետև ո՛չ ժողովուրդը և ո՛չ ազգը գենետիկ երևույթ չեն, այլ սոցիալական: Հեղինակը չգիտի կամ էլ ավելորդ է համարում նշել, որ գանգի ձևը կամ տեսակը կարող է փոխվել՝ կապված անգամ սննդի փոփոխության հետ:

Հատկապես ցնցող է այն միտքը, թե համարձակ կարելի է կասկածի տակ առնել հայերի կապն արմենների<sup>28</sup> հետ: Թո՛ղ Ռ. Մեհթիևին հայտնի լինի, որ հայերն ունեն մեկ էթնանուն՝ հայ, իսկ հարևան ժողովուրդները հայերին կոչել են «արմենիներ» կամ «արմանիներ»՝ հայոց թագավոր Արամանիի անունով, ով մեծ համբավ էր ձեռք բերել հարևան ժողովուրդների շրջանում իր քաղաքական մեծագործություններով: Եվ ընդհանրապես՝ նման տարրական գիտելիքներից զուրկ հեղինակը լավ կանի, որ զբաղվի ժամանակակից աղբրեջանցիների գանգերի ուսումնասիրությամբ, որպեսզի համոզվի, որ գանգաբանական առումով գործ ունի առավել քան բազմազանության հետ: Իսկ հայերի գանգաբանական տիպն այնքան բնորոշ է, որ գերմանացի մարդաբան ֆոն Լուշանը այն պարզապես կոչել է «արմենոիդ»:

Ըստ Ռ. Մեհթիևի՝ հայերը հայացրել են նաև **Արցախ** տեղանունը և հորինել **Վարարակն** բնակավայրը, որի մասին խոսք կա ՀՀ նախագահի հոկտեմբերի 18-ին Գորիսում ունեցած ելույթում: Ըստ Ռ. Մեհթիևի, իբր՝ ոչ մի սկզբնաղբյուրում տեղեկություն չկա Վարարակն բնակավայրի մասին և այդ անունը հորինված ու արհեստականորեն ամրագրված է այն վայրին, որտեղ Վարարաղի խաների կողմից հիմնադրվել է Խանքյանդին: Ավելին՝ Վարարակնը, որ նա գիտակցաբար գրում է փոքրատառով, իբր անօգուտ հորինվածք է հայկական քարոզչության կողմից: Նա պնդում է նաև, որ «հին հայկական» են հռչակվում այնպիսի մտացածին տեղանուններ, ինչպիսիք են Բերձորը, Բարավաճառը, Բաշաթաղը և անգամ Տիգրանակերտ քաղաքը՝ ձեռքի տակ չունենալով գիտական լուրջ փաստեր: Չափից դուրս խորանալով իր անթաքույց կեղծարարության մեջ՝ նա գրում է, որ վերջինիս տրվել է Տիգրանակերտ անվանումը, քանի որ այդ հողը դուր է եկել հայերին, որոնց նվաճողական պլանները հիմնավորելու համար «պատմական կեղծարարության» լաբորատորիաները «հորինել են կեղծ վկայություններ և տարեգրություններ, որոնց

27 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 361:

28 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 11.

վրա խելոք տեսքով հայերը հենվում են<sup>29</sup>»:

Նման պնդումներին ծանոթանալուց հետո սկզբում մարդ ակամա մտածում է, որ այդ աստիճանի անհեթեթություններին պատասխանելը ժամանակի անիմաստ կորուստ է: Սակայն կփորձենք Ռ. Մեիթիևի անգրագիտությունը ջրի երես հանել՝ ամենախիստ կերպով:

Իսկ ի՞նչ զարմանալի բան կա, որ Արցախ անունը հայկական է: Արցախ տեղանվան երկրորդ մասը պարզապես նշանակում է «անտառ», ինչը հանդիպում է սանսկրիտում, պարսկերենում և բազմաթիվ հնդեվրոպական լեզուներում<sup>30</sup>: Տեղանվան առաջին մասը, որ այն հեռավոր ժամանակներում հնչելու էր «աւր-aur» և ընկալվելու էր Վանյան արձանագրության մեջ և հույների կողմից «O», նշանակել է «գովաշունչ քամի»<sup>31</sup>: Եվ քանի որ սեպագիրը չի տարբերակում «O»-ն և «Ու»-ն, տեղանունը Վանյան արձանագրության մեջ արտահայտվել է Ur. ehe գրությամբ: Այլ խոսքով, Արցախ նշանակել է «Քամոտ անտառ», ինչը լիովին համապատասխանում է նրա անտառապատ բնությանը: Երբ Սարգուր Բ-ի գորքերը հասան Արցախ, բայց չներխուժեցին այնտեղ, հավանաբար նրա հարցին, թե ի՞նչ երկիր է լեռնապարի մյուս կողմում, հետևել է պատասխանը՝ «Քամոտ անտառ»: Եվ դա իրոք հասկանալի է, քանի որ Գեղամա լճի անտառագուրկ ավազանի բնակիչների համար Արցախի բնորոշ կողմը նրա անտառապատ լինելն էր:

Արցախի Տիգրանակերտի գոյությունը, որն արձանագրել են Հայոց Պատմահայր Մովսես Խորենացին<sup>32</sup>, Սեբեոս պատմիչը<sup>33</sup> և ուրիշներ, իսկ նրա ավերակները նկարագրել են Ս. Ջալալյանը, Մակար Բարխուդարյանը և ուրիշներ, լիովին հաստատվեց վերջին պեղումների շնորհիվ:

Հեղինակը տարտամ պատկերացում ունի «Խանքյանդի» հասկացության վերաբերյալ: Նախ, Խանքյանդին, չնայած որ նշանակում է Խանիչեն, բոլորովին էլ չի հիմնվել Ղարաբաղի խաների կողմից, այլ կառուցվել է 1847-ին՝ ռուսների կողմից որպես գորանոց: Սակայն ժամանակի ընթացքում գորամասը տեղափոխվում է այդտեղից, և մնում են լոկ ամուսնացածների ընտանիքները, որոշ զինվորականներ և կազակներ: Դրանից հետո այստեղ հաստատվում են շուրջ 60-ի չափ ընտանիքներ, որոնք հարևան Շուշուց, Կարկաժան, Խանաձախ, Գյուլլուջա և Փահլուլ գյուղերից տեղափոխվում են Խանքյանդի: Իսկ այժմ Վարարակնի մասին, որն այդքան զայրացրել է Ռ. Մեիթիևին: Բանն այն է, որ Խանքյանդի գյուղի տափարակը պատկանել է հայկական Վարարակն գյուղի բնակիչներին, որոնց քարակերտ եկեղեցին և հանգստարանը պահպանվում են տափարակի հյուսիսային ձորակի ձախ լանջի վրա՝ Վարարակն աղբյուրի մոտ: Նախապես Վարարակն գյուղի բնակիչները փոխադրվում են Շուշի, և ամայացած գյուղի տարածքի վրա ռուսները կառուցում են վերը հիշատակված գորանոցը:

Ռ. Մեիթիևը մտացածին է հայտարարում Բերձոր, Քարավաճառ, Քաշաթաղ և բազմաթիվ այլ հայկական տեղանուններ: Եթե հեղինակն իրեն մի փոքր անհանգստություն պատճառեր և ծանոթանար V դարի աշխարհագրական մտքի

29 Նույն տեղում:

30 Տե՛ս Դր. Աճառյան, Հայերեն արմատական բառարանում, հատ. Դ, Եր., 1979, էջ 446:

31 Տե՛ս անդ, հատ. Ա, էջ 362:

32 Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Լ:

33 Տե՛ս Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Եր., 1939, գլ. Լ2:



կոթող «Աշխարհացոյց»-ին, ապա կհամոզվեր, որ Բերձոր անունը, որ կնշանակի «բովանգքերի ձոր», դեռ դրանից առաջ էլ գոյություն է ունեցել<sup>34</sup>:

Որքան էլ տհաճ լինի Ռ. Մեհթիևի համար, ստիպված ենք արձանագրել, որ Քարավաճառը գտնվել է Թարթառ գետի վերին հոսանքի շրջանում և այդպես է կոչվել քարի շուկա ունենալու համար: Եղել է գրչության կենտրոն, պահպանվել են մի քանի հիշատակարաններ՝ գրված Քարավաճառում: 18-րդ դարի երկրորդ կեսին այստեղ մուտք գործած քրդական ցեղերը աղավաղել են այդ անվանումը՝ վերածելով Քյալբաջարի<sup>35</sup>:

Քաշաթաղ անունը շատ կիրառական է հայ մատենագրության մեջ: Բայց մենք կրեւենք միայն մի հիշատակություն, որը տեղ է գտել հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ: Խոսելով Սյունիքի գավառների մասին՝ նա գրում է. «Հինգերորդ՝ Աղահեջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և Խոժորաբերդ»<sup>36</sup>:

**Վարձում ենք՝ Ռ. Մեհթիևն էլ մեզ հետ համաձայն կլինի, որ վերոհիշյալ աշխատությունների հեղինակները հազիվ թե իրենց երկերը գրած լինեն՝ ազդվելով 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի քաղաքական խնդիրներից:**

Այս ամենից հետո հեղինակի բերած թյուրքալեզու տեղանունների ցանկը լոկ կարող է տարակուսանք առաջացնել: Իսկ ի՞նչ զարմանալի բան է, որ օտար տիրապետության պատճառով Հայաստանում ծնունդ են առել թյուրքական տեղանուններ, որոնց թիվը բազմապատկվել է 17-րդ դարի սկզբին տեղ գտած հայերի բռնագաղթի հետևանքով, երբ այդ տեղանունները կրողներին բռնի հարկադրել են հայրենիքը թողնել, իսկ մահմեդական քոչվոր ցեղերը աջ ու ձախ նոր անվանումներ են տվել: Հասկանալի է, որ 19-րդ դարի առաջին երեսնամյակում Պարսկաստան քշվածների և պարսկահայերի մի մասի՝ Արևելյան Հայաստանի ռուսական տիրույթներ վերադարձից հետո գործնականում վիճակը չփոխվեց, քանի որ նրանք գործ ունեցան նոր տեղանունների հետ: Ըստ էության՝ այս ցանկին կարելի էր ընդհանրապես չանդրադառնալ վերը նշված հանրահայտ պատճառով, սակայն ցուցակում տեղ են գտել այնպիսի անգրագիտություններ, որոնք չմատնանշելը պարզապես սխալ կլինի:

Ռ. Մեհթիևը հիշատակում է **Բասարգեչարը**<sup>37</sup>, որը վերանվանվել է Վարդենիս, բայց բոլորովին չի կամենում նշել, որ մինչև քոչվոր ցեղերի կողմից Բասարգեչար կոչվելը, այն անվանվել է Սոթք<sup>38</sup>: Այս անունը բազմիցս հիշատակված է ոչ միայն այլ պատմիչների ու «Աշխարհացոյց»-ի մեջ, այլև վիմագիր արձանագրություններում: Իսկ Բասարգեչար անվանումը, թերևս, Ռ. Մեհթիևի քոչվորական նախնիներին բնորոշ ավագակային մտածելակերպի վկայությունն է. ինչպես մտածել են, այնպես էլ՝ վերանվանել: Հեղինակը գիտակցաբար լռում է այն մասին, որ **Ջալալօղլու** կոչվելուց առաջ ներկայիս Ստեփանավան քաղաքը անվանվել է Լոռէ կամ Լոռի: Այսօր **Ղարաքիլիսան** կոչվում է Վանաձոր, իսկ Ղարաքիլիսայից առաջ այն կոչվել է Տանձուտ: Մի՞թե Ռ. Մեհթիևին թվում է, թե **Արագած** լեռը, որի

34 Տե՛ս «Ashkharhatsoys (Asharhac'oys), with an untroduction by Robert H. Hensen», New York, 1994, p.

33: Պրոֆ. դոկտ. Ա.Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագիտությունը, Եր., 1944, էջ 350:

35 Տե՛ս Գայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. Ե, Եր., 2001, էջ 319: Ժ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյանը, հատ. Բ, Եր., 1955, էջ 24:

36 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 12:

37 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c.12.

38 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, անդ, էջ 12, 173, 272, 514:

գրավոր հիշատակությունները սկսվում են հայ մատենագիտության մեջ V դարից, կոչվել է Ալագոյգ. ժողովուրդն ասում է. «Փչի՛ր, փչի՛ր, բայց չափն իմացի՛ր»: Ի գիտություն հեղինակի՝ **Սևանա լիճը** վաղմջական ժամանակներից հայտնի է ոչ միայն Սևան, այլև **Գեղամա ծովակ**, **Գեղարքունյաց ծով**, **Լիխնիտիս** անուններով, իսկ լիճը՝ Գոյքչա, այսինքն՝ կապույտ ջուր, անվանել են երկիր ներխուժած քոչվոր քյուրքախոս ցեղերը:

Պարո՛ն Ռ. Մեհթիև, տեղեկացնում են, որ Արփաչայ անունը բոլորովին նոր անուն է, իսկ **Ախուրյան** անունը հիշատակվում է դեռևս սեպագրական շրջանից: Բայց ո՛չ, այս ամենը զավեշտ է, եթե համեմատենք հեղինակի այն մտքի հետ, թե իբր՝ **Էջմիածին** անունը սկզբնապես եղել է **Ուչ-Մուածին**: Էջմիածին անունը հիշատակվում է 4-րդ դարի սկզբներից և նշանակում է «**իջավ միածինը**»<sup>39</sup>: Մի՞թե 4-րդ դարի սկզբներին հիմնված **Հայաստանի Մայր եկեղեցին** կարող էր կոչվել Ուչ-Մուածին, երբ «**Ուչ**»-ի կրողները դեռևս թափառում էին Ալթայի կողմերում, իսկ արարները դեռ չէին հայտնվել քաղաքական ասպարեզում, որ հայերը նրանցից փոխառնեին «**Մուածին**» բառը: Չեզ մի՛ դրեք հիմար կացության մեջ, պարո՛ն Ռ. Մեհթիև, բացահայտելով ձեր և ձեր յուրայինների **անգրագիտությունը**:

4. Ալբանական մտավարժանքների շարունակությունը

Այժմ անդրադառնա՞նք Աղվանքի շուրջ իրականացվող աղբբեջանական աճապարարություններին<sup>40</sup>: Պարո՛ն Ռ. Մեհթիև, բոլորովին էլ պետք չէ հիմնվել Բ. Իշխանյանի, Հ. Օրբելու և կամ այդ հարցից ընդհանրապես անտեղյակ Ռ. Սյունու վրա: **Ազգությամբ հայ ուսումնասիրողները նույնպես կարող են սխալվել**: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում են, որ նշված հարցերը սխալ է մեկնաբանել նաև ակադ. Ս. Երեմյանը: Եվ ամենակարևորը, ինչպես արդեն վերը նշեցինք, Աղվանքը կամ Ալբանիան սովորական աշխարհագրական հասկացություն է՝ համագոր Գուգարքին, Վասպուրականին, Ճովքին և այլն: Եվ պատահական չէ, որ հաճախ այս կամ այն պատմիչի մոտ կամ վիճակագիր արձանագրություններում զուգահեռաբար նշվում է ոչ միայն որևէ անձնավորության **Աղվանքից լինելու, այլև ազգությամբ հայ լինելու փաստը**:

Երևում է, որ Ռ. Մեհթիևին շատ են հետաքրքրում այսպես կոչված՝ Կովկասյան ալբանները, ուստի հայտարարում է, թե մինչև Լեռնային Դարաբաղի հետ կապված հայ-աղբբեջանական բախումը հայ պատմաբաններն առանձնապես չէին վիճարկում Արցախի՝ Կովկասյան Ալբանիայի կազմում լինելը և այդ երկրամասում ալբանական բնակչության առկայության փաստը: Եվ իբրև թե՛ հայ պատմաբանները փորձել են մերժել Կովկասյան Ալբանիայի գոյությունը անտիկ և վաղ միջնադարյան շրջանում, բայց ակամա ընդունելով այն՝ Հայաստանի և Ալբանիայի միջև սահմանները անց են կացրել Կուր գետով: Եվ պետք է ենթադրել, որ եթե հայկական հավակնությունները տարածվեին մինչև Ապշերոն, ապա Կովկասյան Ալբանիան ստիպված կլիներ տեղափոխվել Կասպից ծովի մյուս ափը: Եվ այսպիսի «փաստարկներով» ասվում է, թե առավել խենթ հայ պատմաբանները այսօր անգամ չեն դադարում բարձրաձայնել «հայկական Բակուրակերտի» մասին:

39 Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. ք., Եր., 1988, էջ 349-353: 40 Տե՛ս <http://www.Trend.az>, 29. 10. 2010.

Հեղինակն անհեթեթության մեջ մեղադրելով հայ պատմագիտությունը՝ անհեթեթության մեջ հայտնվում է հենց ինքը: Հետաքրքիր է՝ այդ ի՞նչ Բակուրակերտի մասին է ճամարտակում Ռ. Մեհիկը, երբ այդպիսի հարցադրում առաջ չի քաշվել հայագիտության մեջ, ուստի պատահական չէ, որ հեղինակը որևէ ազգանուն չի հիշում: Եղել է փորձ Բագավանը տեղադրելու Բաքու քաղաքի շրջանում, սակայն այդ տեսակետը վաղուց մերժված է, քանի որ Աբշի-Բագավան գավառը տեղադրվում է հետագայի Բաջարվան բնակավայրի շրջանում<sup>41</sup>: Իսկ որ երկու պետությունների՝ Մեծ Հայքի ու Աղվանքի միջև սահմանն անցել է Կուր գետով, հավաստում են բազմաթիվ աղբյուրներ: Ստրաբոնի հաղորդման մասին արդեն նշել ենք: Այժմ բերենք Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի տեղեկությունները: Այսպես, Պլինիոս Ավագի համաձայն՝ «Մեծ Հայքը ... լայնությամբ տարածվում է ձախից Արաքսի վրայով մինչև Կյուրոս (իմա՝ Կուր- Բ. Հ.) գետը»<sup>42</sup>: Հետաքրքիր են Կլավդիոս Պտղոմեոսի տեղեկությունները: Համաձայն նրա առաջին հաղորդման՝ Ալբանիան հյուսիսից սահմանակից է Սարմատիայի նշված մասին (գիրք V, գլ. 9, 7), արևմուտքից՝ Իբերիային՝ հիշատակված գծով, հարավից՝ Մեծ Հայքի այն մասին, որն ընկած է Իբերիայի հետ նրա ունեցած սահմանից մինչև Հյուրկանյան (իմա՝ Վրկանից-Հ. Բ.) ծով Կյուրոս գետի գետաբերանը ...»<sup>43</sup>: Իսկ Մեծ Հայքի նկարագրության մեջ նույն հեղինակը գրում է. «Մեծ Հայքը հյուսիսից սահմանակից է Կողքիսի մի մասին, Իբերիային, Ալբանիային Կյուրոս գետով անցնող գծով...

Արևելքից՝ Հյուրկանյան ծովի (իմա՝ Վրկանից- Բ.Հ.) այն մասին, որ Կյուրա գետի գետաբերանից հասնում է մինչև 79° 45' 43" 20' չափումներն ունեցող սահմանը (որի և Կյուրոս գետի գետաբերանի միջև գտնվում է նաև Արաքս գետի գետաբերանը 79° 45' 43" 50') և Սարաստանին (Մեդիային – Բ.Հ.) այդտեղից դեպի Կասիոս լեռը ձգվող գծով, որի ծայրերն ունեն 79° 42' 30" և 80° 30' 39" 40' չափսերը»<sup>44</sup>: Թերևս մտածելով, որ 21-րդ դարում կգտնվեն անձինք, որոնք կփորձեն կասկածի տակ առնել իր տեղեկությունները, նա մի անգամ ևս նշում է. «Հայաստանի Եփրատ, Կյուրոս և Արաքս գետերի միջև ընկած հատվածի ստրատեգիաներն են Մոսքական լեռների մոտ՝ Կատարգենեն Բոքաս կոչեցյալներից վերև, Կյուրոս գետի մոտ՝ Տոսարենեն (իմա՝ Գուգարք – Հ. Բ.) և Օտենեն, Արաքս գետի մոտ՝ Կոլթենեն (իմա՝ Կասպիենեն - Բ.Հ.), իսկ նրանից ներքև՝ Սողոկենեն, Պարյուադրես լեռան մոտ՝ Սիրակենեն (իմա՝ Սիսական – Բ.Հ.) և Սակասենեն (իմա՝ Շակաշեն կամ Գարդմանացիք – Բ.Հ.)»<sup>45</sup>:

Եվ քանի որ Ռ. Մեհիկը շատ է վստահում ակադ. Ս. Երեմյանին, ապա խորհուրդ ենք տալիս ծանոթանալ վերջինիս «Մեծ Հայք» հոդվածին, որը տեղ է գտել նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատությունում և, որքան էլ «ցավալի» լինի, հերքում է Ռ. Մեհիկի անհեթեթությունները: Մենք միանգամայն նպատակադիր մեջ բերեցինք սկզբնաղբյուրների տեղեկությունները և անգամ խուսափեցինք դիմել հայկական աղբյուրներին, մասնավորապես «Աշխարհացոյց»-ին, ուստի պարզապես անհեթեթ է, երբ սկզբնաղբյուրները

41 Տե՛ս Ս. Երեմյան, Գայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42:

42 Pliny, Natural History, London, 1950, VI, 9, 25:

43 Claudii Ptolemaei Geographia, E codicibus recognovit, prolegomenis, annotatione indicibus tabulis instruxit carolus Muellnerus voluminis Primi, Parisiis, 1901, գիրք V, 1:

44 Claudii Ptolemaei Geographia, գիրք V, գլուխ 12, 1, 3:

45 Անդ, գիրք V, գլ. 12, 8:

դնելով մի կողմ՝ Ռ. Մեհթիևը դիմում է Ս. Ե. Կրիմսկու, Ն. Յա. Մառի արտահայտած այս կամ այն կարծիքին:

Հեղինակի և շատ ուսումնասիրողների կողմից այբանական պետության ստեղծումը դրվում է մ. թ. ա. IV-III դդ. և որպես հիմնավորում բերվում է մ. թ. II դարի հեղինակ Արիանոս Ֆլավիոսի «Ալեքսանդրի արշավանքը» աշխատությունը: Լավ է, որ Ռ. Մեհթիևը ծանոթ է հիշյալ աշխատությանը, սակայն, այնուամենայնիվ, լավ կլիներ, որ ծանոթանար նաև Կուրտիոս Ռուփոսի «Historiarum Alexandri regis Macedonum libri quae supersunt» (Մոսկվա 1903) աշխատությանը: Եվ ի՞նչ: Պարզվում է, որ Կուրտիոս Ռուփոսը, որն իր աշխատությունը գրել է մ.թ. I դարում, բացարձակապես զաղափար չունի մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտում այբանների մասնակցության մասին: Այստեղ այբաններին փոխարինում են մասագետները, ինչը շատ կարևոր է: Իրականությունն այն է, որ Արիանոսը՝ ելնելով այն իրողությունից, որ Ալեքանդր են ներխուժել մասագետները կամ հայկական աղբյուրների մագքութները, մասագետներին փոխարինել է այբաններով: Համենայն դեպս, Ստրաբոնի հաղորդումներից, ինչպես նաև Մովսես Խորենացու տեղեկություններից դժվար չէ եզրակացնել, որ Ռ. Մեհթիևի «ավտոխթոն» այբանները ընդամենը՝ եկվոր ցեղեր էին, որոնք ներխուժել էին Այսրկովկաս, անկասկած, Հյուսիսային Կովկասից և իրենց պետությունը հիմնել էին կամ մ.թ.ա. II դարի վերջին, կամ I դարի սկզբին<sup>46</sup>:

Հարևանների հարստությունը թալանելու՝ քոչվորներին հատուկ սովորության նմանողությամբ Ռ. Մեհթիևը Մովսես Կաղանկատվացուն համարում է աղվան պատմիչ և հայտարարում, որ նա իրը՝ հաստատում է Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները: Մինչդեռ, հպանցիկ քննությունն անգամ ցույց է տալիս, որ Կաղանկատվացին պարզապես ամբողջությամբ հետևում է Պատմահոր «Հայոց Պատմությանը»: Հեղինակը փորձում է հայոց թագավոր Վաղարշակին (նրա մոտ՝ պարթևական թագավոր-Բ.Հ.) նույնացնել պարթևական Վաղարշ Բ-ի (51/52-79/80) հետ, որը Առանին նշանակել է Աղվանքի կուսակալ, և քանի որ վերջինիս կուսակալությանն է հանձնվել Կուրի և Երասխի միջագետքը, որի մեջ մտել են Ղարաբաղի «պատմական» հողերը՝ Օրբիստենեն (Արցախը), Ծավդեքը, Ուտիքը և մասամբ՝ Արաքսենեն, հետևաբար Աղվանքի սահմանը հարավում հանդիսացել է Երասխ (հեղինակի մոտ՝ Արագ-Բ.Հ.) գետը<sup>47</sup>:

Հարց է ծագում, եթե հեղինակն այդպես՝ Պատմահոր միջոցով, փորձում է Կովկասյան Ալեքանդրի մաս հռչակել Կուրի և Երասխի միջագետքը, ապա ինչու՞ է մոռանում, որ Պատմահայրը ոչինչ չի ասում Կուրի ձախափնյակի մասին և Առանին համարում է Հայկյան Սիսակի սերնդից<sup>48</sup>: Չէ՞ ո՞ր ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց Արևելից կողմերն Աղվանք անունն են ստացել ընդամենը դաշտի արգավանդության պատճառով, իսկ Կուրի ձախափնյակին Աղվանք կամ Ալեքանդր անունը տվել են հայերը՝ ելնելով այն իրողությունից, որ արգավանդ դաշտի շարունակությունը կազմում է հարթավայրի հյուսիսային հատվածը, հետևաբար՝ հարևան պետությունն ընդամենը Ալեքանդր է կամ Աղվանք, այլ խոսքով՝ արգավանդ դաշտի երկիր: Այս ամենին անտեղյակ Ռ. Մեհթիևը մանրամասները կարող է կարդալ մեր հոդվածներում<sup>49</sup>:

46 Տե՛ս The Geography of Strabon, XI, IV, 5: Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլուխ 2:

47 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 14-15.

48 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Ը:

49 Տե՛ս Բաբկեն Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի հարցի շուրջ,

Երբ մարդը ծանոթ չէ Հայոց պատմությանը, ապա ամեն ինչ կարող է հորինել: Այդ ի՞նչ աղվանական ցեղերի մասին կարող է խոսք գնալ, երբ Ծավղեք անունը, ինչպես Մովսես Խորենացին է նշում, կաղմեսացիների անվանումն է, որոնց բերեցին Հայոց Արևելից կողմեր՝ հանձնելով դրանց մի հատվածի կառավարությունը<sup>50</sup>: Ուտիքի մասին խոսքն անգամ անիմաստ է, քանի որ այն ծագում է հայերեն «հովիտներ» բառից: Հայոց Պատմահոր մոտ դարերի ընթացքում կատարված արտագրությունների հետևանքով տեղ են գտել աղավաղումներ: Այսպես, «Ի տրա գավակաց ասեն սերեալ գազգն Ուտիացոց և Գարդմանացոց և Ծաղեացոց և Գուգարացոց իշխանութիւնսն»<sup>51</sup> հատվածում «Գարդմանացոցը» թյուրիմացության հետևանքով է հայտնվել Առանի սերունդների շարքում, ինչը պարզորոշ ցույց է տալիս Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը, որտեղ Հայոց Արևելից կողմերում հիշատակվում են միայն Մակասենե-Գարդմանացիքը, Մողուկենե-Ծավղեացիքը, Օտենե-Ուտիքը<sup>52</sup>:

Ստրաբոնի ժամանակներում գարդմանացիները բնակվել են Հյուսիսային Կովկասում և միայն մ.թ. I դարում են մուտք գործել Արևելյան Այսրկովկաս: Իսկ երբ Այսրկովկաս ներխուժեցին մասագետները կամ մագրութները, նրանք ստիպված եղան քաշվել դեպի Շաքի-Նուխիի շրջանը, ինչպես արձանագրում է Վարդան Արևելցու «Աշխարհագրութիւն»-ը. «Գարգարացիք Շաքի է»<sup>53</sup>:

Ընդհանրապես գեղեցիկ չէ, երբ պատմիչին վերագրում են մտքեր, որոնք նրա աշխատության մեջ տեղ չեն գտել: Անհեթեթություն է հայտարարել, թե իբր՝ Մովսես Խորենացին հավաստում է Փայտակարան աշխարհի աղվանական բնակչության մասին: Մինչդեռ, Ռ. Մեհթիևի հիշատակած հատվածում ասվում է. «Տրդատը... առաքել բազում համարձակութեամբ, հանդերձ Սանատրուկ ոմամբ յիւրմէ ազգէն Արշակունեաց:

Որոյ երթեալ՝ լինէր օրինակ բարի, հայրենականօքն այլ կուսութեամբ գեր ի վերայ քան զհարսն, և պատժականաւ զոյգ ընդ թագաւորին: Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազատուտ արանց Աղուանից՝ սպանին գերանելին, ընթագրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիական կոչեցեալ ծով... Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»<sup>54</sup>:

Պատմահայրը պարզ հավաստում է, որ Սանատրուկը հայ Արշակունի էր և կառավարիչ նշանակվելով Փայտակարանում՝ Տրդատի մահից հետո փորձում էր օտար ազգերի միջոցով տիրել հայոց գահին: Կուրից հյուսիս գտնվում էր այսպես կոչված՝ Աղվանքը, որը Փավստոս Բուզանդը նույնացնում է Մագքթաց թագավորությանը: Սանատրուկը փորձել է տիրել թագավորական իշխանությանը՝ հենվելով Մագքթական կամ «Յանավազատուտ արանց Աղուանից» ուժերի վրա: Ուրեմն ի՞նչ աղվանից բնակչության մասին կարող է խոսք լինել այս երկրամասում, երբ Ստրաբոնը հայտնում է, որ նշված տարածքում բնակվում են քիչ քա-

ՊԲԳ, 1994, N 1-2, էջ 256-266, 1995, N 1, և Մեծ Դայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., «Բանբեր երևանի համալսարանի», 1976, N 25:

50 Տե՛ս անդ:

51 Անդ:

52 Տե՛ս Claudii Ptolemai Geographia, V, XII, 8.

53 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Բարիզ, 1960, էջ 10:

54 Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. Գ:

նակությամբ աղվաններ և հայեր<sup>55</sup>:

Ինչ վերաբերում է Չարլզ Դոուսեթի հայտարարությանը, թե Թովմա Արծրունին հիշում է երեք աղվան իշխանի<sup>56</sup>, ապա նրանք Հայաստանի Աղվանից կոչված երկրամասի իշխաններն էին և ազգությամբ հայ, ուստի ավելորդ է անգամ դրան անդրադառնալը: Արաբական աղբյուրները հստակ արձանագրում են նրանց՝ հայ պատրիկներ լինելը:

Այդ ամենին հետևում է ցնցող հայտարարություն, թե իբր՝ Ալբանական քազավորության անկումից հետո Ղարաբաղը, լինելով Ադրբեջան աշխարհագրական և քաղաքական միավորի մասը (?), մտել է ադրբեջանական Սաջիդների կամ Սաջյանների պետության մեջ, X դ. մաս է կազմել Սալարյանների պետության, XI-XII դդ. եղել է Շադդադյանների պետության կազմում, XII-XIII դդ. մաս է կազմել Ելտկուզյանների ադրբեջանական պետության: Ինչպես նշեցինք՝ Ռ. Մեթիկը նաև Մեֆյանների պետությունն է համարում թյուրքական, որի մեջ մտել է Ղարաբաղը: Եվ վերջապես, XVIII դարի երկրորդ կեսին Ղարաբաղը հայտնվում է Ղարաբաղի խանության մեջ, իսկ 1805 թ. միացվում Ռուսական կայսրությանը<sup>57</sup>:

Ի՞նչ կարող ես ասել. պարզապես ցատկերի միջոցով ստեղծվող կեղծիքների մի ծաղկաբույլ է: Սկսենք այն բանից, որ **Սաջյանների և Սալարյանների պետությունները եղել են իրանական տարրի պետական կազմավորումներ:** **Շադդադյանները քուրդ էին**, և պարզապես ծիծաղելի է խոսել ադրբեջանական պետության մասին: Եթե անգամ Հայոց Արևելից կողմերը կամ Ղարաբաղը մաս են կազմել Ելտկուզյանների պետության, ապա այդ լույն ճանակում է, որ վերջինս ժամանակավորապես ուժով տիրել է հայկական երկրամասին: Ինչքան էլ բարձր գոռան ադրբեջանական պատմաբանները, **Մեֆյան Պարսկաստանը պարսկական պետություն է:** Հեղինակը գրում է նրանում առկա Ղարաբաղի խանության մասին, բայց ինչու՞ չի հիշատակում, թե ինչպես Արցախ-Ղարաբաղի հայությունը XVIII դ. 20-ական թթ. ապստամբեց և փորձ արեց վերականգնել հայկական պետականությունը: Ինչու՞ ոչինչ չի ասում այն մասին, որ Նադիր շահը ստեղծեց Խամսայի հայկական մելիքությունների միությունը, որը կիսանկախ պետություն էր՝ Պարսից տերության մեջ:

Անշուշտ, ոմանք կարող են ինձ ընդհատել՝ նշելով, որ այս ամբողջ բանավեճը, ըստ էության, առանձնապես կարևոր չէ, քանի որ ինչքան **չների** նախահայրերը կարող են լինել **կատուները**, այնպես էլ **ադրբեջանցիների** նախնիները կարող են լինել **ալբան-աղվանները**: Եվ եթե աղվաններն ապրել են Կուրի ձախսափնյակում, ապա դա որևէ կերպ այդ երկրամասը չի դարձնում ադրբեջանցիների հայրենիք՝ պատմական առումով:

Այնուամենայնիվ, մի քանի խոսք այսպես կոչված՝ աղվանների մասին: Ուսումնասիրողները Ստրաբոնի հիշատակած աղվանական 26 ցեղերի մեջ են մտցնում գարգարներին, ուղիներին, կասպերին և այլն: Կասպերն անվերապահորեն իրանական ցեղ էին, իսկ գարգարները և ուղիները Ստրաբոնի ժամանակներում չէին էլ մտնում հիշյալ ցեղերի մեջ, քանի որ բնակվում էին Հյուսիսային Կովկասում: Չի բացառվում, որ այդ հեռավոր ժամանակներում

55 Տե՛ս Strabo, XI, VII, 1: «Փավստոսի Բիզանդացույ Պատմութիւն Գայոց», Վենետիկ, 1832, դպր. Գ, գլ. Ե: «...Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց»:  
56 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010.  
57 Տե՛ս նույն տեղում:

Աղվանքի բնակչությունն առավելապես իրանական էր: Կովկասյան ցեղերի մուտքը Կուրի ձախափնյակ տեղի ունեցավ ալանների՝ Հյուսիսային Կովկասում հայտնվելու ժամանակ, երբ մի շարք կովկասալեզու ցեղեր, մասնավորապես գարգարները և ուդիները ալանների ճնշման տակ ներխուժեցին Այսրկովկաս և բնակություն հաստատեցին Կուրի ձախափնյակում: Ինչպես Չինաստանը իրականում երբեք չի կրել ռուսական «Китай» անվանումը, այնպես էլ Կուրի ձախափնյակում ստեղծված պետությունը երբեք չի կոչվել ո՛չ Ալբանիա և ո՛չ Աղվանք: **Այդպես նրանց կոչել են միայն հայերը, այն էլ զուտ աշխարհագրական առումով՝ որպես արգավանդ դաշտի երկիր:** Ինչպես տեսանք, աղվանները բոլորովին էլ ավտոխոսն չեն, այլ եկվոր տարր, ինչպես նշում է Հայոց Պատմահայրը: Բոլորովին էլ պատահական չէ, որ այսպես կոչված Ալբանական կամ Աղվանից պետության անկումից հետո այդպես էլ միասնական էթնոսի չվերածված Կուրի ձախափնյակի ցեղերից և ոչ մեկը չպահպանեց «ալբան» կամ «աղուան» անունը: Նրանց ցեղային կյանքը շարունակվեց բավական երկար ժամանակ, երբ արաբների կողմից պարտադրված մահմեդականության ազդեցությամբ մեծ մասը ձուլվեց եկվորներին:

Սա է իրական ճշմարտությունը, սակայն մի պահ՝ զուտ հիպոթետիկ կերպով, ընդունենք, որ ճիշտ է աղբբեջանական պատմագիտությունը, երբ ալբանական է հռչակում Հայոց Արևելից կողմերի բնակչությանը: Իսկ ո՞վ ասաց, որ այդ ցեղերին իրենց մեջ լուծելու հարցում հայերը որևէ իրավունք չունեին, և դա միայն արաբների, իսկ հետագայում՝ եկվոր թյուրքական ցեղերի անկապտելի իրավունքն էր: Եվ այդ ինչպե՞ս է, որ «ալբանների սերունդներ հանդիսացող» Արցախ-Ղարաբաղի ազգաբնակչությունն **իբրև հայ** կենաց-մահու պայքար էր մղում պարսից (5-րդ դար), արաբական(7-9 դարեր) և ապա՝ թյուրքական ցեղերի տիրապետության դեմ:

Ու Մեհթիևը գտնում է, որ Աղբբեջանի քրիստոնեական հուշարձանները միշտ եղել են հայոց պետականության կողմից կեղծարարության առարկա<sup>58</sup>: Այս հիմարությանը պատասխանելու կարիք անգամ չկա, քանզի «Աղվանից եկեղեցի» անվանումն առաջացել է պատմական անցքերի պատճառով, երբ հայոց եկեղեցու թեմերը Ռեանի կամ Առանի մարզպանության ստեղծումից հետո 5-րդ դարում, հոգևոր-վարչական առումով ստիպված էին մտնել նոր կառույցի մեջ: Չնայած Աղվանից անվանմանը՝ այն պարզապես Հայոց եկեղեցու մի մասն էր, և եթե տվյալ կաթողիկոսությունը հատուկ անջատողական ձգտումներ էր հանդես բերում, ապա դրանք անմիջապես սաստվում էին հայոց եկեղեցու կողմից: Ավելին՝ գտնվելով օտար տիրապետողների լծի տակ՝ հայոց եկեղեցին ծանր ժամանակաշրջաններ է ապրել, իսկ մի պահ հայ կաթողիկոսությունների թիվը հասել է 6-ի: Դրա արդյունքն են Կիլիկիայի, Ադրամարի կաթողիկոսությունների հանդես գալը, բայց սա ամենևին էլ չի նշանակում, թե դրանք օտար տարրերի եկեղեցիներ էին:

Աղվանական արձանագրությունները հայերի կողմից ոչնչացնելու հեքիաթը պատմեք Չեր երեխաներին, պարո՞ն Մեհթիև: Մեկ ուրիշ տիպի հեքիաթ էլ է հորինվել՝ հայերի կողմից իբր՝ աղբբեջանական հուշարձանները ոչնչացնելու մասին<sup>59</sup>:

58 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, с. 17-18.

59 Տե՛ս նույն տեղում:

Եթե Ռ. Մեհթիկը կամենում է, ապա կարող է ցույց տալ հայկական մշակութային կոթողները բարբարոսաբար ոչնչացողների հասցեն: Աղբբեջանի պետական այրեր, կարող էք ասել, թե ուր են անհետացել այսօր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մեջ գտնվող Ջուղայի հազարավոր հայկական խաչքարերը: Կամ ինչու՞ են անհետացել Նախիջևանի երկրամասի հայկական եկեղեցիներն ու մշակութային այլ արժեքները:

Պարոն Ռ. Մեհթիկ, մեկընդմիջտ ընդունեք, որ ոչ Մովսես Կաղանկատվացին է աղվան հեղինակ և ոչ էլ Կիրակոս Գանձակեցին, և Հայոց Արևելից կողմերի իշխանները կարող են համարվել Աղվանից երկրամասից, որովհետև ազգությամբ հայ են: Գանձասարի եկեղեցին էլ և մյուս քրիստոնեական եկեղեցիներն ու մատուռները Կուրի և Երասխի միջագետքում ստեղծվել են հայերի կողմից և հայոց մշակութային գանձերի մի մասն են:

Ի դեպ՝ 72 առաքյալներից Եղիշեն<sup>60</sup> ոչ հայ է և ոչ էլ՝ աղվան: Նա քարոզել է Հայոց Արևելից կողմերում, որի Աղվանից դաշտը՝ իր լեռնակողմով, ընդամենը Հայաստանի մի մասն էր: Ավելացնենք նաև, որ հայերը ռեստավրացիայի անվան տակ տվյալ տարածաշրջանի ոչ մի վանք և եկեղեցի չեն ոչնչացրել, քանի որ դրանք ի սկզբանե անտի հայկական են: Եվ շատ զարմանալի է, որ այդ հարցն այդպես հետաքրքրում է մահմեդական աղբբեջանցիներին, որոնք հաճույքով միշտ էլ ոչնչացրել են քրիստոնեական կոթողները, իսկ Արցախում անգամ հողով էին ծածկել մի հայկական եկեղեցի:

Այժմ մոտենում ենք Ռ. Մեհթիկի կեղծարարություններից ամենազարմանալիին: Ըստ նրա՝ ստացվում է, որ մինչև XV դարի կեսերը Հարավային Կովկասում հայեր համարյա թե չեն ապրել և միայն 1441 թվից, երբ Ջահան շահը կաթողիկոսությունը Կիլիկիայի Սիս քաղաքից տեղափոխեց, իբր՝ այդ ժամանակ ամբողջությամբ թուրքաբնակ Իրիվանի (իմա՝ Երևան-Բ.Հ.) մասը կազմող **Ուչ-Քիլիսայի** կամ **Ուչ-Մուսափնի** վանքը, որը հնում իբր՝ եղել է ալբանական վանք, հայ քարոզիչները գալիս են այս երկրամասերը և տարածում քրիստոնեություն: Եվ որ իբր, մինչև XIX դարի առաջին կեսը հայերը Արևմտյան Անդրկովկասում շատ չնչին են եղել<sup>61</sup>:

Ինչպե՞ս որակես այս ամենը: Մեր կարծիքով, սա **պետական աստիճանի բարձրացված խուլիգանություն է**: Ամենազգվելին այն է, որ Ռ. Մեհթիկը շատ լավ գիտի, որ անամոթաբար կեղծում է պատմությունը, սակայն դա նրան բոլորովին չի անհանգստացնում:

Հեղինակի ընդամենը մի քանի տողերի մեջ բազմաթիվ անճշտություններ և կեղծիքներ են տեղ գտել: Նախ՝ Ջահան շահը քյուրք-աղբբեջանական պետության բազավորը չէր, այլ, անշուշտ, թուրքմենական ծագումով կարա-կոյունլուների: Եվ նա չէ, որ կաթողիկոսությունը Կիլիկիայի Սիս քաղաքից տեղափոխել է Էջմիածին, այլապես Կիլիկիայի կաթողիկոսությունը կդադարեր գոյատևել: Չմոռանանք, որ Կիլիկիան այդ շրջանում գտնվում էր Եգիպտոսի Մամլուքյան պետության կազմում, և Ջահան շահը այդ երկրամասի նկատմամբ ոչ մի իշխանություն չուներ: Խնդիրը միանգամայն այլ էր: Կիլիկիայի Հայկական պետության անկումից հետո էլ Կիլիկիայի կաթողիկոսությունում շատ ուժեղ էին արևմտամետ միտումները, և հայ հոգևորականությունը կամենում էր Հայոց կաթողիկոսությունը տեղափոխել

60 Տե՛ս նույն տեղում, էջ 19-20:  
61 Տե՛ս նույն տեղում:



հայկական ստվար բնակչություն ունեցող բուն Հայաստան: Ձահան շահը ընդառաջ գնաց հայերի ձգտումներին և հայ հոգևորականները 1441 թվին, իրենց ձեռքում ունենալով Գրիգոր Լուսավորչի աջը, Կիրակոս Վիրաբեցուն ձեռնադրեցին Ամենայն հայոց կաթողիկոս, և կրկին հայոց կաթողիկոսությունը հաստատվեց Էջմիածնում, որտեղ էլ ծնունդ էր առել 4-րդ դարում:

Ռ. Մեհթիկը կարող էր և չնշել Հ. Փափագյանի հրատարակած «Персидские указы Матенадарана» («Մատենադարանի պարսկական հրամանագրեր») փաստաթղթերի ժողովածուն, քանի որ ոչ ոք չի պատրաստվում կասկածի տակ առնել այն իրողությունը, որ Վաղարշապատ գյուղը և Էջմիածնի վանքը մահմեդական այլազգիները կոչել են Ուչ-քիլիսա: Դրա մեջ զարմանալու ոչինչ չկա, քանի որ օտար տիրապետողներն իրենք են որոշում, ինչպես կոչել այս կամ այն բնակավայրը կամ վանքը: Հեռու չգնանք. Բարձր Հայքի կենտրոնը հայերն անվանել են Կարին, իսկ թուրքերը՝ Էրզրում, հայերը՝ Սեբաստիա, իսկ թուրքերը՝ Սվազ և այլն: Այլ խնդիր է, թե ինչու՞ են մահմեդական այլազգիները Էջմիածինը կոչել Ուչ-քիլիսա: Հարկ է նշել, որ սկզբում Ուչ-քիլիսա կոչվել է Վաղարշապատ գյուղը, քանի որ այնտեղ էին գտնվում Սբ. Հռիփսիմեի, Սբ. Գայանեի և Սբ. Շողակաթի վանքերը, և քանի որ Վաղարշապատը մեծ բնակավայր չէր, և հաճախ վանքի՝ Մայր Աթոռի անունով կոչվում էր Էջմիածին, այլազգիների կողմից Ուչ-քիլիսա անունը տեղափոխվեց վանքի վրա: Հիմարություն է կարծել, որ հայերը Ուչ-Մուսձինը վերածել են Էջմիածնի: Դրա համար հարկ է, որ Ռ. Մեհթիկը մինչև թյուրքական ցեղերի հայտնվելը՝ XI դարից առաջ, Առաջավոր Ասիայում ցույց տա Ուչ-քիլիսայի հիշատակությունը կամ թեկուզ Ուչ-Մուսձինի հիշվելը, ինչը նա երբեք չի կարող անել:

Ռ. Մեհթիկը չի բավարարվում նման տգեղ կեղծիքով և հայտարարում է այն մասին, որ հայերը մինչև XIX դարի սկզբի գաղթը Արևելյան Հայաստանի ռուսական տիրույթներ (հեղինակի մոտ՝ Հարավային Կովկաս- Բ.Հ.) շատ փոքր թիվ են կազմել այնտեղ: Իր թեզն ապացուցելու համար նա նշում է, որ հայերը եկել էին Բալկաններից և ապրում էին Վանա լճի շրջակայքում, իսկ Հարավային Կովկասում մինչև նրանց գաղթը գերակշռել է տեղական թյուրքական բնակչությունը: Հայերի «եկվորությունը» հաստատելու համար նա հենվում է Հերոդոտոսի տեղեկությունների վրա, որոնց սխալ ընկալումը վաղուց է ցույց տրված պատմագիտության մեջ: Ինչպես միշտ, այս դեպքում ևս նա վկայում է սկադ. Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած «История армянского народа» (Երևան, 1980), Ա. Փաստրմաճյանի «Histoire de l'Arménie» (Paris 1999), Ի.Ի. Դյակոնովի «К предистории армянского языка» (ՊԸՀ, թիվ 4, 1983) աշխատությունները, ինչը, նրա կարծիքով, ընդունվում է ուսումնասիրողների մեծ մասի կողմից<sup>62</sup>:

Թո՛ղ հեղինակին հայտնի լինի, որ Հերոդոտոսի տեղեկությունները վերաբերում են հայոց Արամանի թագավորից պարտություն կրած փռուզիացիներին, որոնք ստիպված եղան իրենց վրա վերցնել հայոց թագավորի անունը և դառնալ նրա ժողովուրդը: Մրանք են, որ եղել են փռուզիացիների գաղութաբնակները: Մի փոքր ավելի ուշ հարևան ժողովուրդները հայերին կոչեցին արմանիներ կամ արմենիներ՝ հայոց Արամանի թագավորի անունով, որը պահպանվել է Մովսես Խորենացու երկում՝ մի փոքր աղավաղված Արամ ձևով: Այնպես որ լավ կլինի, որ

62 Տես նույն տեղում, էջ 19-20:

ադրբեջանցիները մտածեն իրենց եկվորության մասին և չփորձեն եկվոր հայտարարել այս տարածաշրջանի տեղաբնիկ ավտոխթոն հայերին: Ավելի քան ծիծաղելի է, երբ մ.թ.ա. 2-րդ հազարամյակին վերաբերող չստուգված տեղեկությունները համեմատության մեջ են դրվում 20-րդ դարում միայն իբրև ազգ ձևավորված՝ Ալթայի քոչվորականների ծագումնաբանության հետ:

Ռ. Մեիքիևին շատ է զայրացրել ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի այն հայտարարությունը, թե Ղարաբաղի բնակչությունը դարեր շարունակ եղել է միատարր հայկական, և թյուրք-մուսուլմանական ցեղերը ներթափանցել և բնակություն են հաստատել միայն XVIII դարի երկրորդ կեսին, և նրանց թիվը անցյալ դարի սկզբներին կազմել է ընդհանուր բնակչության ընդամենը հինգ տոկոսը: Հեղինակի կարծիքով, աղբյուրներն այլ բան են ասում, որ իբր հայերն են գաղթել Ղարաբաղ: Շարունակելով իր տեսակետը՝ նա հայտարարում է, որ օսմանյան փաստաթղթերը հավաստում են միայն հայերի XVII-XIX դդ. Ղարաբաղ գաղթելու մասին, որի հետևանքով իբր փոխվել է բնակչության էթնիկ կազմը:

Իր տեսակետն ապացուցելու նպատակով նա դիմում է Ջ. Բուռնուբյանի, Սվանտե Բորնելլի, Ա. Ս. Գրիբոյեդովի, Ն. Ի. Շավրովի աշխատություններին, «Акты собранные кавказской археографической комиссией» ((АКАК), VII, Тифлис, 1878, փաստաթուղթ 829) ժողովածուին և ռուս նկարիչ Վ. Ի. Մաշկովի՝ 1828 թ. հայերի գաղթը պատկերող նկարին<sup>63</sup>: Իր այս «քննությունը» կատարելուց հետո նա հայտարարում է, որ ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը «քոչվոր մուսուլմաններ» անվանումը պետք է հատկացներ հայերին և ոչ թե քոչվոր բառն օգտագործեր մահմեդականների համար:

Այլևս չտրանսլավ մման բարբառանքների մեջ՝ անցնենք խնդրի պարզաբանմանը: Նախ, թող Ռ. Մեիքիևի մտքով չանցնի, որ մենք պետք է փորձենք հերքել Պարսկաստանից հայերի ներգաղթի փաստը: Իհարկե, ո՛չ: Սակայն հետաքրքիր է, թե հեղինակը իրեն հարց տվել է, թե ինչու՞ Արևելյան Հայաստանը, որ պարզապես հեղեղված է հայկական հազարավոր հուշարձաններով և հարյուրավոր եկեղեցիներով, 19-րդ դարի սկզբին ուներ մուսուլմաններին քանակապես գիշող հայկական բնակչություն: Անտարակույս, ո՛չ: Քանի որ այդ հարցին պատասխանելիս նա ծանր կացության մեջ կհայտնվեր: Խնդիրն այն է, որ ղրգրբաշական, այսպես կոչված՝ «ադրբեջանական ցեղերի» կողմից հայերի նկատմամբ 1604-1605 թթ. իրագործվել է մի խայտառակ ցեղասպանություն: Շահ Աբբասի հրամանով Հայաստանի կենտրոնական շրջանների և Արևելյան Հայաստանի բնակչության գերակշիռ մասը բռնի տեղահանվեց, այլ խոսքով՝ բռնագաղթեցվեց Պարսկաստանի խորքերը<sup>64</sup>:

Անշուշտ, Շահ Աբբասը Պարսկաստանի թագավորն էր, որքան էլ ադրբեջանցի պատմաբանները թմբկահարեն Սեֆյանների ղրգրբաշական պետության ադրբեջանական լինելը: Սակայն հայերի նկատմամբ ցեղասպանությունն իրականացրին թյուրքական ղրգրբաշական ցեղերը: Ամենահամեստ հաշվարկներով՝ բռնագաղթեցվեց 330 հազարից ավելի հայություն, չնայած շատ ուսումնասիրողներ, իսկ պետք է ասել, որ նրանք չեն սխալվում, բռնագաղթվածների

63 Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:  
64 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Էջմիածին, 1896: Г. Эзов, Сношение Петра Великого с армянским народом, СПб, 1898. И. П. Петрушевский, Азербайджан в XVI-XVII вв., «Сборник статей по истории Азербайджана», Баку, 1949, с 277. Գայ ժողովրդի պատմություն, հատ. IV, եր., 1972, էջ 95-102:

իրական թիվը համարում են շուրջ կես միլիոն: Եթե անգամ վերցնենք նվազագույն քանակությունը և մեկ դարի ընթացքում բռնագաղթվածների անը համարենք ընդամենը 100 տոկոս, ինչը շատ ցածր է իրական աճից, ապա կտեսնենք, որ հայ ժողովրդին հասցվել է զարհուրելի հարված, քանի որ 330 հազարը XVII դարի վերջին կկազմեր կամ ավելի ճիշտ կազմելու էր 660 հազար, XVIII դարի վերջին՝ 1320 հազար, XIX դարի վերջին՝ 2640 հազար, XX դարի վերջին՝ 5280 հազար, այլ խոսքով՝ ներկայումս աշխարհով մեկ սփռված հայության կեսից ավելին: Իսկ եթե բռնագաղթվածների թիվն ընդունենք կես միլիոն, ինչը համապատասխանում է իրականությանը, ապա ցածր աճի պայմաններում XVII դարի վերջին կազմելու էր 1 միլիոն, XVIII դարի վերջին՝ 2 միլիոն, XIX դարի վերջին՝ 4 միլիոն, XX դարի վերջին՝ 8 միլիոն, այսինքն՝ բռնագաղթվածների թիվն անգամ ամենացածր աճի պայմաններում XX դարի վերջին կհավասարվեր ներկայիս Ադրբեյջանի Հանրապետության բնակչությանը:

Բայց մի՞թե հայկական տարրը հնարավորություն ունեցավ բնականոն ձևով աճելու: Իհարկե, ո՛չ: Մովը, ցուրտը և համաճարակները, բառիս իսկական իմաստով, հնձեցին բռնագաղթեցվածներին, և միայն խլյակները կարողացան իրենց գոյությունը պահպանել:

1828-1830 թթ. ներգաղթին մենք դեռ կանդրադառնանք, սակայն չմոռանանք, որ հայությունը էթնիկ առումով մեծ արհավիրքների ենթարկվեց նաև XVII դարից հետո: Հայկական տարրը մեծ կորուստներ ունեցավ Նադիր շահի իշխանության օրոք, և այդ կորուստների չափը դժվար է անգամ ճշտել: Սակայն, որքան էլ տարօրինակ լինի, Արևելյան Հայաստանի հայությունը մեծապես տուժեց անգամ քրիստոնյա պետությունների կողմից: Արևելավրացական թագավոր Հերակլ Բ-ն իր 1779 թ. արշավանքի ժամանակ Վրաստան բռնագաղթեցրեց Արարատյան երկրի ութ գյուղերի՝ Հարանիսի, Բլուրի, Ալեթլուի, Էվջիլարի, Քյալակարիսի, Շահրիարի, Գուրդուղուրի և Աշտարակի բնակիչներին, որոնց բնակեցրեց Գորիում, Հավլաբարում և Մղնախում<sup>65</sup>: Չնայած բռնագաղթվածների մի փոքր մասին Հերակլ Բ-ն ետ վերադարձրեց, սակայն հաշվի առնելով Արարատյան գյուղերի բազմամարդությունը, բռնագաղթեցվեց ավելի քան 2000 ընտանիք, հետևաբար բռնագաղթեցվածների թիվն անցնում էր 10 հազարից:

Արևելյան Հայաստանի բնակչությունը ծանր հարված ստացավ ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմի ժամանակ: 1804 թ. ազգությամբ վրացի ռուսական զեներալ Ցիցիանովը Երևանի անհաջող գրոհից հետո իր հետ Թիֆլիս տարավ 2000 հայ, որոնց հաստատեց Հավլաբարում<sup>66</sup>: Դժվար չէ տեսնել, որ հայ բնակչությունը մեծապես տուժում էր ոչ միայն մահմեդական իշխանություններից, այլև քրիստոնյա պետություններից:

Իսկ ի՞նչ էթնիկական պատկեր էին ներկայացնում Երևանի և Նախիջևանի խանությունները մինչև Ռուսական կայսրությանը միացվելը: Պարզվում է, որ դրանց բնակչության ընդհանուր թիվը կազմել է 169 155 մարդ, որից հայեր՝ 57 305 մարդ կամ 33,8 տոկոսը, մահմեդականներ՝ 84 089 կամ 49, 7 տոկոսը, քրդեր՝ 26 911 կամ 16 տոկոսը և այլ ժողովուրդներ՝ 850 կամ 0,5 տոկոսը<sup>67</sup>: Եթե անգամ բոլորովին

65 Տես Չիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, «Կռունկ Հայոց աշխարհին», 1802, թիվ 4, էջ 280: Г. Нокодзе, Ираклий Великий, Тбилиси, 1988, с. 104.

66 Տես И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб. 1852.

67 Տես Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. Գ, Եր., 1967, էջ 116:

չանդրադառնանք հայերի XVII դարի սկզբի կորուստներին, ապա ստացվում է, որ ժողովրդագրական պատկերը բոլորովին այլ կլիներ, եթե XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին հիշյալ բռնագաղթերը տեղի չունենային: Հերակլի կողմից դեպի Վրաստան բռնագաղթվածների թիվը 1828 թ. կազմելու էր ավելի քան 22 000, իսկ Ցիցիանովի միջոցով բռնագաղթվածներինը՝ շուրջ 3000, այլ խոսքով՝ այդ երկու խանություններում հայերը կկազմեին ոչ թե 57 305, այլ 82 305 մարդ կամ ընդհանուր բնակչության շուրջ 43 տոկոսը, իսկ մահմեդականներին թիվը կլիներ նույնպես շուրջ 43 տոկոս: Այսինքն՝ այս բոլոր արհավիրքներից հետո անգամ հայ բնակչությունը գործնականում հավասար էր մահմեդական բնակչությանը:

Ադրբեջանական պատմագիտության կողմից շատ է խոսվում պարսկահայերի 1828 թվականի ներգաղթի մասին դեպի Արևելյան Հայաստանի ռուսական տիրույթներ: Եթե XVII դարում Շահ Աբբասը բռնագաղթեցրել է 330 հազարից մինչև 500 հազար հայերի, ապա՝ չհաշվելով անգամ նրանց հնարավոր աճը մինչև 1828 թվականը, 1828 թվին ներգաղթել են շուրջ 40-45 հազար հայեր, որոնց գերակշիռ մասը Արևելյան Հայաստանի՝ Պարսկաստանին մնացած բաժնից էին<sup>68</sup>: Եթե անգամ հաշվի չառնենք այն իրողությունը, որ բուն պարսկական երկրամասերից այդ թվի անգամ կեսը չէր գաղթել, ապա գաղթողների մեծամասնությունը Արևելյան Հայաստանի պարսկական մասից տեղափոխվել է Արևելյան Հայաստանի ռուսական տիրույթներ:

### 5. Իսկ Ղարաբաղի մասին հարկ է մոռանալ

Սակայն Ռ. Մեխիևի հիմնական թիրախը շարունակում է մնալ հայկական Ղարաբաղը: Հեղինակին խիստ զայրացրել է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մահմեդական բնակչությանը համարել է քոչվոր, իսկ հայերին՝ արմատական, բուն բնակչություն: Հեղինակի կարծիքով, իբր՝ մահմեդական բնակչությունը, ըստ շատ հեղինակների, գերակշռել է հայկականին մինչև պարսկահայերի ներգաղթը: Թե ինչքանով են մահմեդականները գերակշռել հայերին, մենք դրան կանդրադառնանք, սակայն իզուր է Ռ. Մեխիևը տաքանում, երբ հայտնի է, որ մահմեդական ամառանոցները, որոնք ժամանակավոր կայաններ էին, վերածվեցին մշտական բնակավայրերի միայն ցարական իշխանությունների նպատակադիր քաղաքականության հետևանքով: Կամ ի՞նչ է, Ռ. Մեխիևը չգիտի<sup>69</sup>, որ Լեռնային Ղարաբաղի հարցի առնչությամբ անընդհատ, մանավանդ՝ 1905-1906 թթ. ընդհարումների շրջանում արծարծվել է մահմեդականների քոչի խնդիրը, որ **իր ժողովրդին հոգեհարազատ «քոչվոր» բառն այդքան զայրացնում է հեղինակին**:

Չցանկանալով մտնել պատմության խորքերը՝ նշենք, որ հայերը XVIII դ. սկզբին կազմում էին Լեռնային Ղարաբաղի բնակչության առավել քան գերակշիռ մասը: Լեռնային Ղարաբաղի հոգևոր առաջնորդների ու մելիքների Եկատերինա Ա-ին 1725 թ. հոված նամակում նշվում է, որ Ղարաբաղի վեց մահալներից յուրաքանչյուրում հաշվվում է 36-50 գյուղ և ամեն մի գյուղում 600, 500, 400, 200, 100 և 50 տնտեսություն<sup>69</sup>: Դաշտային Ղարաբաղում, անշուշտ, քոչվոր տարրն

68 Տես անդ, էջ 77:  
69 Տես Армяно-русские отношения в первой половине XVIII в., «Сборник документов», т. II, ч. II, Ереван, 1967, с. 249.

աստիճանաբար ավելանում էր և այդ ցեղերի մեջ առանձնանում էր 24 (Բգիրմի-դյորթ) քրդական ցեղերի միությունը, որի գլուխ կանգնած էր Ջևանշիր ցեղը: Ավելորդ է ասել, որ դրանք քրդական և ոչ թե թյուրքական ցեղեր էին: Քրդական և ոչ թե թյուրքական ցեղերի մի աննշան մասը հայ մելիքների թույլտվությամբ հաստատվում է Լեռնային Ղարաբաղի հայկական մելիքություններում՝ մշտապես կազմելով աննշան փոքրամասնություն: Այդ վիճակն ինչ-որ չափով փոխվեց, երբ Փանահի խանին հաջողվեց իր տիրապետությունը հաստատել հայկական մելիքությունների վրա: Նա իր իշխանությունն ամրապնդելու համար Վրաց թագավորությունից և հարևան խանություններից մի շարք ցեղեր տեղափոխեց Ղարաբաղ, որոնցից էին կարաչորլու, փուսիան, ջինլի, դեմուրչի-հասանլի, կենգերլու, քյոթանլի և այլ ցեղեր: Միայն Ղազախից Ահմեդ աղան Ղարաբաղ է տեղափոխում իր 1500 ընտանիք ցեղակիցներին<sup>70</sup>:

Փանահի հաջորդ Իբրահիմ խանի օրոք նոր թափ ստացավ թյուրքալեզու էթնիկ խմբերի ներթափանցումը լեռնային շրջաններ, իսկ Ղազախին Ղարաբաղն աստիճանաբար հայաթափվում էր, հայ բնակչության մի մասը՝ բռնի մահմեդականացվում: Այդ իրողությունը լավ է բնութագրել գերմանացի հետազոտող Ա. Հաբստհաուզենը: Նրա խոսքերով, XVIII դ. սկսած այդ գեղեցիկ երկիրը, այսինքն՝ Ղարաբաղը կրում է խոր անկման հետքեր: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծույլ թաթարներ ու թյուրքեր, որոնք աստիճանաբար լիովին առավելություն են ստանում տեղաբնիկ հայերի նկատմամբ<sup>71</sup>: Այդ իրողությունն էր, որ ստիպում էր հայերին խնդրագրով դիմելու Ռուսական կայսրությանը: Ղարաբաղի հայությունը նշանակալից կորուստներ ունեցավ Աղա-Մահմեդ խանի 1795 թ. արշավանքի ժամանակ: Բազմաթիվ կանայք և աղջիկներ բռնաբարվեցին, մեծ թվով տղամարդիկ կտորովեցին, իսկ անասուններն ու գույքը քչեցին, տարան: Փրկվածներն ապաստանեցին երկրամասի լեռներում ու անտառներում<sup>72</sup>: Աղա-Մահմեդ խանի 1797 թ. արշավանքից հետո Ղարաբաղում սով բռնկվեց, ժողովուրդն անասելի գրկանքներ կրեց և մի մասով գաղթեց Վրաստան, մյուս մասով՝ Շամախու կողմերը, Ռուսաստան, Օսմանյան կայսրություն և անգամ՝ Պարսկաստանի խորքերը: Սովին հաջորդեց ժամտախտը, որին զոհ գնացին մեծ թվով հայեր, սակայն բնակչության մեծ մասը համառորեն կառչել էր իր հայրենի հողին<sup>73</sup>: Մելիք Մեջլումի և Աբովի՝ Եկատերինա Բ-ին ուղարկած նամակից իմանում ենք, որ հայ մելիքների հպատակներն էին 12 հազար հայ ընտանիք կամ շուրջ 70 000 մարդ<sup>74</sup>: Իսկ երբ 1797 թ. հոկտեմբերի 7-ին Պավել կայսրը Ղարաբաղի մելիքներին իրենց հարազատների հետ ռուսական հպատակություն տվեց, Ղարաբաղի շատ հայեր տեղափոխվեցին դեպի Ղազախ և Վրաց թագավորության այլ շրջաններ, Շաքի և Շիրվան<sup>75</sup>: Հիշյալ արտագաղթների և թյուրքական բռնաճնշումների հետևանքով Լեռնային Ղարաբաղից արտագաղթեցին շուրջ 11 հազար ընտանիք: Այս բոլորով

70 Տե՛ս Սիրզա-Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Եր., 2000, էջ 46-96: Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг., «Сборник документов», т. IV, Ереван, 1990, с. 354. Н. Жуковская, Судьба кочевой культуры, Москва, 1990, с. 54.

71 Տե՛ս А. Гакстаузен, Закавказский край, СПб, 1857, ч. I, с. 208, 213.

72 Տե՛ս Обзор Елисаветпольской губернии за 1908 г., Елисаветполь, 1909, с. 3.

73 Տե՛ս Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг., «Сборник документов», т. IV, с. 373-375, 378, 459-461.

74 Տե՛ս անդ, էջ 315:

75 Տե՛ս անդ., էջ 465, 505-507, 527, 533-535.

հանդերձ՝ 1805 թ. Ղարաբաղում կային մոտավորապես 10 հազար, իսկ 1808 թ. մարտական գործողություններից հետո՝ 7,5 հազար ընտանիք հայեր: Ղարաբաղի հայությունը ծանր հարված ստացավ 1812 թ., երբ 2200 մարդ գերի տարվեց, իսկ 2000-ը փախուստի դիմեց: Ուստի՝ հայ բնակչության թիվը պատերազմից հետո կազմեց ընդամենը 5 հազար ընտանիք<sup>76</sup>: Հետաքրքիրն այն է, որ երբ Ղարաբաղը կցվեց Ռուսական կայսրությանը, բազմաթիվ ղարաբաղցի հայեր փորձեցին վերադառնալ Ղարաբաղ, սակայն ցարական իշխանություններն ամեն կերպ արգելեցին այդ:

1823 թ. Մոզիլսկու և գնդապետ Երմոլով Բ-ի կողմից իրականացրած Ղարաբաղի պրովինցիայի բնակչության հաշվառումը կատարվեց հարցումների միջոցով, և իրենք էլ՝ հաշվառումն իրականացնողները, բոլորովին վստահ չէին հաշվառման ճշգրտության մեջ, այլ խոսքով՝ տվյալները բոլորովին հուսալի չէին: Սակայն, եթե ելնենք անգամ այդ տվյալներից, ապա ինչպես ճիշտ եզրակացրել է Հ. Մարգսյանը, Լեռնային Ղարաբաղի տարածքում բնակչությունը կազմել է 36 500 մարդ, որից հայ՝ 84,6 տոկոսը, թյուրքալեզու մահմեդականներ՝ 14,7 տոկոսը և քրդեր՝ 0,7 տոկոսը: Գյուղական բնակչության 97,5 տոկոսը հայեր էին: Համեմատության համար նշենք, որ Ղարաբաղի պրովինցիայում 1823 թ. եղել է 17 520 ընտանիք, որոնց 30 տոկոսը հայկական էին, 22 տոկոսը՝ թուրքական և 2 տոկոսը՝ քրդական: Մահմեդական բնակչության 46 տոկոսը՝ գլխավորապես Ղաշտային Ղարաբաղի բնակիչներ, քոչվորական կյանք էին վարում<sup>77</sup>:

Քոչվորներին հանելու դեպքում Լեռնային Ղարաբաղի տարածքում ունենք ընտանիքների 54 տոկոսը: Հետևաբար՝ լեռնային հատվածում հայ բնակչությունը կազմում էր ավելի քան 55 տոկոս, թյուրքախոս թաթարները՝ 36,6 տոկոս, իսկ քրդերը՝ 3,7 տոկոսից մի փոքր ավելի:

1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղում ապրում էր 128,6 հազար մարդ, որի 82,7 տոկոսը կամ 106,4 հազարը հայեր էին, 15,9 տոկոսը կամ 20,4 հազարը՝ թաթարներ, 1,5 հազարը՝ ռուսներ և 300-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ: Շուշիի բնակչության 55,8 տոկոսը հայեր էին<sup>78</sup>:

Մենք բոլորովին միտք չունենք հերքելու, որ Պարսկաստանից գաղթածները հաստատվել են նաև Լեռնային Ղարաբաղում:

Ասենք թե 1992-ին ցեղասպանության ենթարկված Մարաղայի հայ բնակիչների գաղթելու 160-ամյակին նվիրված հուշարձան կա, հետո ի՞նչ: Եթե շատ եք կամենում, պարո՛ն Ռ. Մեհթիև, կարող ենք նշել այն բնակավայրերը, որոնց թյուրքալեզու բնակչությանը Ղարաբաղ էին բերել Ադրբեջանի իշխանությունները: Նրանք պարզապես ժամանակ չունեցան իրենց գաղթը վավերացնող հուշարձաններ կանգնեցնելու: Ահա սա է իրական պատկերը, պարո՛ն Մեհթիև, և փաստերն անտեսելու կարիք անգամ չկա:

76 Տե՛ս Акты собранные Кавказской Археографической комиссией, Тифлис, 1873, т. V, ч. II, с. 579.

77 Տե՛ս Камеральное описание Карабахской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермолова, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым II, Тифлис, 1866.

78 Տե՛ս Исторический архив России, фонд 1990, опись 11, дело 636.638 695, Елисаветпольская губерния, Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., Елисаветпольская губерния, книга 63, СПб, 1904.

Ղարաբաղի խանությունը բոլորովին էլ ադրբեջանական<sup>79</sup> չէր, այլ պարսկական, իսկ Կուրակ-չայի 1805 թ. պայմանագիրը թեև կնքված էր Իբրահիմ խանի և ռուսական իշխանությունների կողմից, միջազգային իրավունքի տեսակետից գրոշի արժեք չուներ: Ղարաբաղի խանը, դավաճանելով Պարսկաստանին, պայմանագիր էր կնքել Ռուսական կայսրության հետ: Իրենք՝ ռուսներն էլ մեծ նշանակություն չէին տալիս այդ պայմանագրին, որովհետև Ղարաբաղի անցումը կայսրությանը իրավական առումով վավերացվեց միայն 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով: Կուրակ-չայի պայմանագրով ռուսական ցարիզմը պարզապես տակտիկական քայլ էր կատարել՝ շատ լավ հասկանալով, որ այն չի ճանաչվելու և ոչ մի պետության, առաջին հերթին՝ Պարսկաստանի կողմից:

Անցնելով 20-րդ դարի իրադարձություններին, Ռ. Մեհթիևը հատկապես ուրախանում է այն պատճառով, որ 1921-ին Կավբյուրոյի նիստում հայերը (օրինակ՝ Ա. Մ. Նազարբեյյանը) քվեարկել են, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում: Եվ որ Ղարաբաղի հայության առաջնորդները (օրինակ՝ Սերո Մանուցյանը) ողջունել են այդ որոշումը, որն իբր՝ հայ գյուղացիության կողմից ընդունվել է կատարյալ համերաշխությամբ<sup>80</sup>: Անշուշտ, լավ է, որ Ռ. Մեհթիևը հիշում է Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը: Բայց մա լավ կաներ՝ վերհիշեր նաև Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի նիստը, որը որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղը թողնել Հայաստանի կազմում: Ճիշտ է՝ այդ որոշմանը Ա. Նազարբեյյանը դեմ է քվեարկել, սակայն Ալ. Մյասնիկյանը (Մյասնիկով) քվեարկել է կողմ: Այնպես որ բոլոր հայերը չեն, որ քվեարկել են Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու օգտին: Հետո չմոռանանք, որ հուլիսի 4-ին Օրջոնոկիձեն էլ քվեարկեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի ԽՍՀ մաս ճանաչելու օգտին, իսկ հաջորդ օրը նա անմիջապես անցավ հակառակ տեսակետն ունեցողների բանակը, հենց որ Մոսկվայից թելադրվեց հակառակ լուծումը:

Խոստովանում են, որ հայ բոլշևիկների մեծ մասը, այդ թվում և Ա.Մ. Նազարբեյյանը, ազգային գիտակցությունը կորցրած մարդիկ էին, որոնց համար Մոսկվայի խոսքն օրենք էր: Սակայն կարծում են, որ այդ հարցում ադրբեջանցիներն էլ առանձնապես շատ պարծենալու տեղ չունեն: Այսօր ադրբեջանական պատմաբանները աջ ու ձախ հայիչում են Բաքվի Կոմունան և նրա առաջնորդ, ազգությամբ հայ Ստեփան Շահումյանին, բայց իրենց հարց չեն տալիս, որ նրա կոմիսարներից Մաշադի Ազիզբեկովը ադրբեջանցի էր: Կամ՝ արդյո՞ք Նարիմանովը չեղավ Ադրբեջանի Դեմոկրատական Հարապետության գերեզմանափորը: Նշենք, որ բոլշևիկների մեծ մասը, համաշխարհային հեղափոխության գաղափարին կառչած, ո՛չ ազգություն ուներ և ո՛չ էլ հայրենիք: Ցավով, ստիպված են խոստովանել, որ այդ հարցում հայ բոլշևիկներն առաջամարտիկներ էին: Չմոռանանք նաև, որ Հայաստանի Կոմկուսի կենտկոմը Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ մերժել էր Կավբյուրոյի հուլիսի 5-ի որոշումը:

Մի հարցում համաձայն ենք Ռ. Մեհթիևի հետ, որ ԼՂԻՄ-ը արհեստական կազմավորում էր<sup>81</sup>, քանի որ այն բոլոր օրենքներով պետք է մաս կազմեր Հայկական ԽՍՀ-ին: Համաձայն ենք նաև, որ մարզի սահմանները Ադրբեջանի

79 Տե՛ս <http://www.Trend.az>, 29.10.2010, c. 23.

80 Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:

81 Տե՛ս նույն տեղում:

կառավարության կողմից անցկացված էին կամայականորեն: Անհասկանալի է, թե ինչու՞ Գյուլիստանի շրջանը, որն ավելի ուշ հայտնի էր Շահումյանի շրջան անունով և միշտ մաս էր կազմել Խամսայի մեկիքսյունների միության, դուրս էր թողնվել մարզի սահմաններից: Միանգամայն անհեթեթ էին մարզի սահմաններն արևմուտքում, որտեղ աղբբեջանական իշխանություններն ամեն ինչ արել էին, որ մարզն անմիջական սահման չունենա Հայկական ԽՍՀ-ի հետ: Աղբբեջանական իշխանությունները չէին կամենում, որ մուսուլմանաբնակ որևէ գյուղ հայտնվի ինքնավար մարզի տարածքում, երբ Գյուլիստանից մինչև ՀԽՍՀ-ի Շամշադինի շրջան տասնյակ հայկական գյուղեր հայտնվում էին մարզից դուրս: Մարզի սկզբնական տարածքը եղել է 4160,5 քկմ, հետո այն դարձել է 4431,7 քկմ: Եվ դա համարվում է «բարյացակամության» մեծ նշան, սակայն ոչինչ չի ասվում, որ Աղբբեջանի իշխանությունների կողմից աստիճանաբար մեծացվում էր աղբբեջանական բնակչության տոկոսը և այնուհետև մարզից հանվում էին տարածքներ և՛ հյուսիսում, և՛ հարավում, որոնք մտցվում էին հարևան շրջանների տարածքների մեջ:

Ռ. Մեհիկը խոսում է ԼՂԻՄ-ին միացված ինչ-ինչ հողերի մասին՝ մոռանալով, որ Անդրֆեդերացիայի օժանդակությամբ Աղբբեջանը տիրացել է Հայկական ԽՍՀ-ի տարածքներին Ալլահ-Գյուլերի (իմա՝ Ալ-Բ.Հ.) լճերի շրջանում, Միսիանի սահմանակցությամբ և այլ հատվածներում: Հեղինակը շատ է ոգևորվում և հայտարարում է, թե Աղբբեջանի կողմից 150 հազար դեսյատին հողեր են «նվիրվել» Հայկական ԽՍՀ-ին՝ Չանգեգուրի, Չանգեչիրի և Ղազախի գավառների տարածքում՝ 1923 թվին, 1929 թվին՝ Չանգեգուրի գավառի հատվածում Նյուվա-դիի շրջանը և մի քանի այլ գյուղեր<sup>82</sup>:

Եվ ինչպե՞ս է, որ Չանգեգուրը հռչակվում է Աղբբեջանի «պատմական տարածք», երբ անգամ Խորհրդային Ռուսաստանն այն մշտապես ճանաչել է Հայկական ԽՍՀ-ի անկապտելի մաս, այն դեպքում, երբ տարածքային հարցերում միշտ աղբբեջանամետ է եղել: Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանս է ներկայացրել Արևելյան Հայաստանի տարածքը և սահմանները՝ գերակշիռ հայ բնակչությամբ, իսկ Աղբբեջանի ԽՍՀ-ն մուսկովյան իշխանությունների աջակցությամբ տիրացել է այդ տարածքի մեկ երրորդին, - սա է ճշմարտությունը:

Ռ. Մեհիկն, լավ կանեք հրաժարվեք այն հեքիաթից, թե իբր՝ Սունգայիթի ջարդի ժամանակ հայերը մասնակցել են կոտորածներին<sup>83</sup>: Աղբբեջանում կային (այժմ չգիտեն՝ կա՞ն, թե՛ ոչ-Բ.Հ.) բազմաթիվ ուղիներ, որոնք կրում էին հայկական ազգանուններ: Թերևս դրանցից մեկին հավաքագրել են աղբբեջանական հատուկ ծառայությունները: Խորապես ցավում են երկրաշարժից հետո ժամանած աղբբեջանական փրկարարների ինքնաթիռի կործանման համար, որի մեղքը բնության վրա է, բայց չեն կարող չհիշել, թե ինչպես այդ օրերին թույլ չէին տրվում Հայկական ԽՍՀ ժամանել հումանիտար օգնություն պարունակող էլեղոնները և կամ էլ Աղբբեջանում ինչպե՞ս էր փչացվում աշխարհի առաքած օգնությունը:

Շարունակելով իրականությունը գլխի վրա շրջելու իր գործելակերպը, «ԼՂԻՄ-ը Աղբբեջանից դուրս բերելու<sup>84</sup>» հայության փորձերը Ռ. Մեհիկը հա-

82 Տե՛ս նույն տեղում, էջ 26:

83 Տե՛ս նույն տեղում, էջ 27:

84 Տե՛ս նույն տեղում:



մարում է միակողմանի և հակառակ ԽՍՀՄ սահմանադրությանը: Իսկ ու՞ր է այսօր ԽՍՀՄ-ը, որի սահմանադրությամբ միութենական հանրապետությունները այնքանով էին իրավասու դուրս գալու ԽՍՀՄ կազմից, որքանով նրանց կազմում եղած ինքնավարությունները՝ միութենական հանրապետության կազմից, ինչը և տեղի է ունեցել: Իսկ դրանից հետո Ադրբեջանի իշխանությունները, պատերազմ սկսելով Ղարաբաղի դեմ, կորցրել են անգամ ԽՍՀՄ-ի կամ մյուս երկրների սահմանադրությունները մեջտեղ բերելու իրավունքը:

**Թեև անցած զույգ տասնամյակներում Ադրբեջանի ղեկավարությունն ամեն ինչ արել է իր երկրում հակահայկական քարոզչություն ծավալելու համար, բայց հայկական քարոզչությունն իր առջև հակաադրբեջանական քարոզչության խնդիր չի դրել ու չի դնում:**

Ավելին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես պետություն կայանում է և առնականանում: Եվ թո՛ղ Ռ. Մեհթիևը շատ չանհանգստանա մեր անկախության հնարավոր կորստի համար. ո՛չ հայ ժողովուրդը և ո՛չ ՀՀ նախագահը, պարո՛ն Մեհթիև, Չեր խորհուրդների կարիքը չեն զգում: Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք, սակայն ցանկացած ոտնձգության կարող ենք հավոր պատշաճի պատասխանել: Ուստի մեզ զայրացնել պետք չէ:

Ավելին՝ երբ որևէ պետություն, օրինակի համար՝ Ադրբեջանը, մոռանում է պատմության դասերը և փորձում է ոտնահարել ժամանակավորապես իր գերակայության տակ հայտնված ժողովուրդների իրավունքները, ապա դրանով հենց ինքն է ամրապնդում նրանց ինքնորոշման իրավական հիմքերը: Ու քանի որ Լեռնային Ղարաբաղի հայերը վաղուց արդեն ինքնորոշվել են, պարո՛ն Մեհթիև, զգուշացե՛ք պատմությունը կեղծելու և նրա դասերն անտեսելու գործելակերպից, քանի որ նման եղանակով Չեր երկրում սերմանվող այլատյացության մթնոլորտում հերթը կարող է հասնել թալիշների կամ լեզգիների ինքնորոշմանը...

Լեռնային Ղարաբաղը եղել է, կա և կլինի հայկական: Այն գոյություն ունի de facto, սակայն սարբերի ետևում չէ նաև այն օրը, երբ հայ ժողովրդի երկու հատվածները կմիավորվեն մեկ պետության մեջ:

## Summary

### A STATE LEVEL RAISED FALSIFICATION

*“Goris-2010: the Annual Year of the Absurd Theatre”: the Political Drivel of Razik Mehtiyev, the President Recruitment Manager of Azerbaijan*

Babken H. Harutyunyan

The RA president Serj Sargsyan gave a speech in front of the Diaspora correspondents on October 16 of this year, making an appeal to bring the true Press to the attention of the world society. His speech evoked a state of rage in the authority circles of Azerbaijan, and on October 29, R. Mehtiyev, the president recruitment manager of Azerbaijan, came up with an article, not only trying to take under suspicion and to deny the theses of the RA president’s speech, but also the achievements of the Armenian historiographical mind.

In the present article, on the factual material it is being shown that in the person of R. Mehtiyev the Azerbaijani historiography, while examining the Armenian issues, makes falsification and leads a policy of artificially falsifying the simplest issues.

In the article such questions are being examined as the problems of the Azerbaijani being new-comers and formation time questions, the impossibility and drivel of the Caucasian Albans being the ancestors of the Azerbaijani, Strabon's and other authors' deliberate information falsification by R. Mehtiyev, the emergence of the geographical and governmental region name "Azerbaijan" from the Iranian Atur-Patakan, the problem of the Turkish falsifications of the Armenian place-names of the Eastern Armenia caused because of the Muslim bends, Vararakn village's preceding the Khanqyand barracks and residence, the genocide committed by the ancestors of the Azerbaijani, the Ghzlbash tribes, in the Eastern Armenian at the beginning of the XVII century, the emigration of the Armenians forced by the Christian states in the second half of the XVIII century and in the first 30 years of the XIX century, the fact of Nagorno Karabakh being a part of the historical Armenia, the place-name Ejmiatsin having no connection with the "Uch-Muazin" invention, the circumstance of giving Ejmiatsin the name "Uch-qilisa", the real picture of the Persian Armenians after the 1826-1828 Russian-Persian War, the real picture of the Nagorno Karabakh population in the XVIII century and at the beginning of the XIX century, the NKAO demographical problems, the so-called "Genocide of Khojalu", the legitimacy of the Armenians' self-determination of Nagorno Karabakh.